№ 45 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 3

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 3 № 45

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».
Կովկասից դուրս գտնվող անձերի և բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում՝ Дома Л. и Э. Метль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
Հիւսիսային Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 ռուբլի, Թիւրքիա 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։
Տարեկան հիշատակարանների յայտարարութիւնները Центральная Контора Объявленій Торгов.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» խմբագրութիւնը աւանդական սովորութիւն ունէր և ունի ուղարկել թերթը ամեն տարվայ սկզբին նախորդ տարվայ միայն այն բաժանորդներին, որոնք վերանորոգած են լինում բաժանորդագրութիւնը կամ վայրօրէ ուղարկած խնդիրք՝ չը դադարեցնել թերթը։ Բացի բարոյական տեսակէտից՝ որևէ ճնշումն գործ չը դնել բաժանորդի վրա, ուղարկելով թերթը հակառակ նրա ցանկութեան, այդ սովորութիւնը ունի և այն հիմնաւոր պատճառը, որ ազատում է խմբագրութիւնը պօստային և այլ աւելորդ ծախսերից և մի քանի տեխնիկական անյարմարութիւններից։ Սակայն անցեալ 1908 թ.ի սկզբին խմբագրութիւնը ուղարկեց «Մշակը» նախորդ 1907 թ.ի բոլոր բաժանորդներին և դրանց մէջ մի քանի հոգու, որոնք չէին վերանորոգել բաժանորդագրութիւնը, այն նկատումով, որ 1907 թ.ին մի քանի ամիս չէր հրատարակվել «Մշակը»։ Բայց 4—5 հոգի գրանցից տրտունջ յայտնեցին, թէ ինչու ուղարկել ենք իրանց «Մշակը», քանի որ իրանք չեն վերանորոգել բաժանորդագրութիւնը։

Այդ պատճառով ներկայ 1909 թ. սկզբին մենք նորից գործադրեցինք մեր աւանդական սովորութիւնը և որոշեցինք ուղարկել «Մշակը» միայն այն բաժանորդներին, որոնք վերանորոգած կը լինեն իրանց բաժանորդագրութիւնը առ 1-ն յունվարի։ Այդպիսով մօտ 70—80 հոգու, որոնք չէին վերանորոգել առ 1-ն յունվարի, մենք դադարեցրինք «Մշակի» առաքումը։

Վերջերս դրանցից շատերից մենք ստացանք արտունջ և գանգատ, թէ մենք չը պէտք է դադարեցնէինք մանաւանդ նրանց, որոնք երկարաժամայ բաժանորդներ են եղել, և պէտք է շարունակէինք ուղարկել, համոզված լինելով, որ կը ստանանք բաժանորդագինը։ Այդ անձինք մի տեսակ վիրաւորված են զգում իրանց մեր՝ որպէս թէ՝ ցոյց տուած անվստահութեան համար։

Մենք ցաւ ենք յայտնում մեր նախորդ այդ բաժանորդներին, որ ակամայ ափթ ենք տուել այդպիսի կասկածների և տրտունջների։ Մեր վարմունքի պատճառը մենք բացատրեցինք. մենք կամեցել ենք միայն, որ ոչ ոք իրաւունք չունենայ տրտնջալ, թէ ինչու մենք ուղարկում ենք նրան «Մշակը» առանց նրա պահանջին։

Բոլոր այն անձերը, որոնք կը ստորագրվեն «Մշակին» այս մարտի 1-ից և կը ցանկանան ստանալ նաև նախորդ երկու ամիսների համարները, դեռ կարող են ձեռք բերել՝ վճարելով 10 ռուբլի, որովհետև յունվար և փետրվար ամիսների մի որոշ սահմանափակ թիւ համարների ունենք մեր տրամադրութեան տակ։ Իսկ մարտի 1-ից ստորագրվողները պէտք է վճարեն 9 ռուբլի։

ՌՈՒՍ ՅԵՂԱՓԽԱԿԱՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Բերլին, 28 փետրվարի

Այստեղի և Դրէզդէնի ոստիկանութիւնը երեսն հանեց արտասահմանում ապրող ռուսների գաղտնի դաշնակցութիւն, որ նպատակ ունի աշակցութիւն ցոյց տալ ռուսական յեղափոխական բանւորական կուսակցութեան։

Փետր. 14-ին խուզարկութիւն կատարվեց Բերլինում ապրող ռուսներից մինի մօտ, որ յայտնեց, թէ ինքը Վարշավայի մի գեներալի Անանիին որդին է։ Նրա ընակարանում գրված նամակներից և ուրիշ փաստաթղթերից երևաց, որ գոյութիւն ունի գերմանական տեխնիկական դպրոցների ռուս ուսանողների լայն ճիւղաւորված գաղտնի դաշնակցութիւն։ Անանիինը ձերբակալվեց և 48 ժամվայ ընթացքում աքսորվեց Գերմանիայից։

Այնուհետև Դրէզդէնում, Միւնհէնում և Կղտէնում կատարվել են խուզարկութիւններ և ձերբակալութիւններ, որոնցով պարզվել է, որ Գերմանիան, բացառութեամբ Պրուսիայի, ռուսական յեղափոխական պրոպագանդայի նպատակներով բաժանված է հիւսիսային և հարաւային շրջանների։

Գաղտնի դաշնակցութեան անդամների խմբեր գտել են Դրէզդէնում, Բրաունշվեյգում, Միւնվայդայում, Կէսէնում, Լայպցիգում, Հէսսէնում, Միւնխէնում, Կարլսրուէում, Մայնհէյմում։

Գրաւված արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ կապ կայ գերմանական սոցիալ-դեմոկրատական և արտասահմանեան ռուսական սոց.-դեմոկրատական խմբակների միջև՝ ռուսական սոց.-դեմոկ. կուսակցութեանը բովանդակ աշակցութիւն ցոյց տալու մասին։ Դրէզդէնի դատախազը Դրէզդէնում ձերբակալվածների դէմ դատ է սկսել, մեղադրելով նրանց գաղտնի համախմբում հաստատելու մէջ։ Ռուս մեղադրեալները պահվում են հսկողութեան ներքոյ, իսկ միւս գերմանահպատակները ազատ են արձակված, որովհետև հիմք չը կայ վախենալու նրանց փախուստի մասին։ (Հ. Գ.)

ՅԵՏԱԶԳՎԱԾ Է

Գիւղատնտեսների համաժողովը յետաձգված է։

Նա պէտք է տեղի ունենար ներկայ մարտի 14—20-ին։

Բայց չի կայանայ, որովհետև համագումարի համար չեն ստացված բաւականաչափ զեկուցումներ։

Որքան էլ դատապարտելի և տխուր լինի այդ փաստի խոստովանութիւնը, բայց ինքը փաստը մեր առաջն է։

Այն անձերը, որոնց յայտնված էր համագումարի կազմակերպութեան գործը, անկարող հանդիսացան նրան գլուխ բերել։

Առաջ համագումարը նշանակված էր նոյեմբերին. նրան յետաձգեցին մինչև դարձն, իսկ այժմ յետաձգում են մինչև աշուն։

Ցաւալի է և վիրաւորական։

Եթէ գործ դրված լինէին փոքր ինչ աւելի եռանդ և աշխատանք՝ անշուշտ այժմ պատրաստ կը լինէին զեկուցումներ և ամբողջ ուսումնասիրութիւններ։

Այդ զանցառութիւնը պատիւ չէ բերում մեր զիւղատնտեսական գործողներին։

Եւ ինչում է միայն մի բան ցանկալի, որ գոնէ աշնանը պատրաստ լինի ամեն բան համագումարի համար և այլևս խնդիր չը ծագի յետաձգումի մասին։ Թէ չէ՝ խայտառակութիւնը կատարեալ կը լինի։

Մենք ուզում ենք հաւատալ, որ այս անգամ մարդիկ կը պատրաստվեն աշնան համագումարի համար լուրջ կերպով և համագումարը կը կայանայ իրապէս բաւարար լուծում տալով նրա քննութեանն առաջարկված հարցերին։

ՍԵՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Բէլգրադ, 28 փետրվարի

Կոմս Ֆօրգաչի յանձնած նօտան ներկայացվեց ֆինանսների և առևտրի մինիստրութիւնների քննութեանը, որոնք և մշակում են պատասխանի նախագիծը. վերջնական խմբագրութիւնը կորոշէ մինիստրների խորհուրդը։

Սկուպշչինային մի օրինագիծ յանձնվեց, որով 5.400,000 ֆրանկ է խնդրվում զօրքի կարիքների համար որպէս լրացուցիչ գումար։ (Հ. Գ.)

Պարիզ, 28 փետրվարի

Մամուլը դժգոհութիւն և զայրոյթ է յայտնում այն լուրերի առիթով, թէ Աւստրիան անբաւական է մնացել սերբիական նօտայից։ (Հ. Գ.)

Վիէննա, 1 մարտի

Դիպլոմատիական լաւատեղեակ շրջանակներում համարեա գլխովին այն կարծիքի են, որ սերբիական նօտան պարզ չէ և գոհացում չէ տալիս։ Սակայն «Շուրայի-Իւմմէթը» ցաւ է յայտնում, որ Սերբիան ագիտացիա է մղում մեծ պետութիւնների կամքի հակառակ։

Այն լուրերի առիթով, իբր մեծ պետութիւնները Բ. Դռնից պահանջում են նօտա-Բազարի սանջակի մի մասը տալ Սերբիային և Զերնօգօրիային, «Շուրայի-Իւմմէթը» յայտնում է, որ օսմանեան ազգը ամեն կերպ կը դիմադրէ այդ բանին։ (Հ. Գ.)

Վիէննա, 27 փետրվարի

«Ֆրեմդենբլատը» գտնում է, որ սերբիական նօտան աչքի է ընկնում իր մութ և խուսափողական բովանդակութեամբ։

«Ամենից առաջ,—ասում է լրագիրը,—նօտան մոռանում է Սերբիայի սպառազինութեան մասին, որ հինգ ամիս շարունակ ուղղված է մեր դէմ։ Մեզ համար բօսնիական հարցը վերջացած է, քանի որ մենք արդէն համաձայնութիւն կապեցինք Թիւրքիայի հետ»։ (Հ. Գ.)

—

Բերլինից «ԲէՀԵ» լրագրին հեռագրում են, որ, «Լոկ. Անց.»-ի Վիէննայի թղթակցի ասելով, 99% հաւանական է համարվում, որ մարտի վերջում կամ ապրիլի սկիզբներում պատերազմական գործողութիւններ կը սկսվեն Սերբիայի դէմ։ Գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի Վիէննա վերադառնալը հաստատում է այն կարծիքը, որ պատերազմը անխուսափելի է։

ենթադրում են, որ գահաժառանգը զօրքերի գլխաւոր հրամանատար պիտի նշանակվի։ Պատերազմի անհրաժեշտութիւնը պատճառաբանվում է նրանով, որ այժմ պէտք է անպատճառ լուծվի այն հարցը՝ թէ ով պէտք է գերակշռող ազդեցութիւն ունենայ Բալկաններում՝ Աւստրիան թէ՞ Ռուսաստանը։

—

Բերլինից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ, «Բերլ. Տագ.» լրագրի Բէլգրադի թղթակցի ասելով, սերբ կառավարութիւնը մայրաքաղաք է կանչել 3-րդ կարգի պահեստի զինուորներին՝ սկսած 38—45 տարեկանները։ Այդպիսի միջոցի սերբիական կառավարութիւնը երբէք չէ դիմել։

—

Վիէննայից հեռագրում են «Ր. Ս.» լրագրին որ բաւարական սահմանի վրա կազմ ու պատրաստ կանգնած են սաքսօնական ու բաւարական մի-մի զօրաբանակ՝ Հարաւային Տիրօլ ուղեորվելու համար այն դէպքում, եթէ զինուորական բարդութիւններ ծագելու լինեն, որի շնորհիւ Աւստրիան հարկադրված լինի Հարաւային Տիրօլից Սերբիա և Բոսնիա փոխադրելու իր զօրքերը։ Այդ երկու զօրաբանակները պէտք է պահպանեն Աւստրիայի սահմանները Իտալիայից։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

«Ր. Ս.» լրագրին հեռագրում են Բագուից հետևեալը.

«Արժանահաւատ աղբիւրից ստացած տեղեկութիւնների համաձայն կարող եմ հաղորդել, որ մօտ օրերս Հաջի-Կարաւլ կայարանի վրայով անցել է շահի փոքր եղբայր Շահ-Սալթանէն, որին Բաշտում պահել էին տեղական սահմանադրականները»։

Ինչպէս յայտնի է, Շահ-Սալթանէն վերջին ժամանակներս ապրում էր Վարշավայում։ Նա վերադառնում էր Թէհրան Մահմէդ-Ալի շահի պահանջով։ Այդ մասին տեղեկանալով Բաշտի սահմանադրականները, բռնեցին Շահ-Սալթանէին ու բանտարկեցին և ազատեցին այն ժամանակ միայն, երբ արքայազնը համաձայնվեց կրկին արտասահման վերադառնալ։

Շահ-Սալթանէն պէտք է Սպահանի դէմ ուղարկված կառավարչական զօրքերի գլխաւոր հրամանատարը նշանակվէր։

—

Լօնդոն, 28 փետրվարի

Երէկ, «Դէյլի Քրօնիկլ» լրագիրը Թաւրիզի իր թղթակցից ստացաւ հետևեալ հեռագիրը.

«Կառավարութեան կողմակիցները և նացիօնալիստները Թաւրիզում միատեսակ լուրջ ջնասներ են կրում։ Կարծում են, որ շահի զօրքերի թիւը 6000 մարդու է հասնում։

Դպրոցական գործի և մանկական պարտէզի կազմակերպման մասին կասեմ մի բան միայն, որ ժամանակից մանկական պարտէզներից շատերը կը ցանկանային ունենալ այն կահաւորութիւնն ու պայմանները, որոնց մէջ գտնվում էր տ. Բաբայեանի պարտէզը 25 տարի առաջ։

Ահա թէ ինչպէս է նկարագրում իր յիշողութիւնների մէջ յարգելի պ. Ազայեանը տ. Բաբայեանի մանկական պարտէզը։

«Ընկայ մանկական պարտէզ, ուր երեխէրքը անմեղ հրեշտակների էին նման, ուրախ, զուարթ, ինչպէս անհոգ թռչնիկները, որոնք անընդհատ թռչկոտում և երգում էին իրանց մայրիկի՝ Սօֆիայի չորս կողմում, և ես չը գիտէի, թէ որից եմ աւելի հիացած—կրթողից թէ՞ կրթվողներից, այնքան ընական սիրալի էր դրանց բարոյական և մտաւոր աճումն ու զարգացումը»։

Բացի առաւօտեան պարապմունքներից՝ Բաբայեան ամուսինները, կամենալով տարածել երեխաների՝ մինչև դպրոց մանելու դաստիարակութեան գաղափարը, սիրալիր կերպով պատրաստակամութիւն յայտնեցին դասախօսութիւններ կարդալ այդ հարցի առիթով հետաքրքրվող մայրերի ու դաստիարակչուհիների համար։ Եւ ահա այդ ունկնդրուհիներից էլ կազմվեց մի խմբակ «Ֆրեօբելեան ընկերութիւն» անունով, որը իրան նպատակ դրեց բանալ ժողովրդական մանկական պարտէզ։

Շատերը յոռետեսութեամբ էին վերաբերվում այդ բանին և գտնում էին, որ դա շռայլութիւն է ժողովրդական զաւակների համար։ «Ինչու՞ նրանք պէտք է զբաղվեն Ֆրեօբելեան խաղալիքներով»—նկատում էին ամեն բան և ամենքին քննադատել սիրող է, որովհետև հասարակութիւնը կը պահպանէ փոքրիկներին ամենավաղ մանկութիւնից, որոնց բաղդը իր միօրինակ օրերը անց է կացնում կեանքի պաղ ու մայլ մթնոլորտում։ Մեղանից որին չէ պատահել տեսնել՝ թէ ինչպէս ծնողները աշխատելու գնալիս, տանը աւագ անդամ չունենալու պատճառով, կողպում էին իրանց բնակարանի դռները և պահում երեխաներին ներսը՝ խեղդուկ նկուղներում կամ խոնաւ սենեակներում, թողնելով նրանց համար մի կտոր չոր հաց։

Միայն ժողովրդական մանկական պարտէզների բացումը կարող է այն բազմաթիւ խաթերի առաջն առնելու գրաւականը հանդիսանալ, որոնց մենք նկատում էինք այդ փոքրիկ էակների մէջ։ Բացի նրանից, որ մանկական պարտէզների բոլոր աշխատանքները (կազմակերպված ժամանակատանքներում) մի տեսակ հիմք են կից պայմաններում, մանդնում ապագայ աշխատաւորի համար, մանկական պարտէզը միևնոյն ժամանակ կը հեռացնէ նրանց նաև այն ծանր ու չքաւոր երեխաների մեծամասնութեանը բթացնող պայմաններից, որոնց մէջ նրանք գտնվում են։

Մանկական պարտէզը այդ կեղեքված ու բաղդի զրկանքին մատնված երեխաներին կը տայ ուրախ մանկութիւն և այդպիսով հնարաւորութիւն կը տայ կեանքի ամենածանր պայմաններում յիշելու իրանց անցկացրած ուրախ օրերը մանկական պարտէզում և մտածելու. «Ուրախ մանկութիւն, մանկական անուրջներ, միայն ձեզ կարելի է յիշել—ժպիտ ու արցունքներ»։

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐԱԿԸ ԲՌՆԿՎԵՑ ԵՒ ՀԱՆԳԱՒ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՎ

—

Բաղդաւոր մի դէպք ինձ հնարաւորութիւն է տալիս գրել մի քանի խօսք ժողովրդական մանկական պարտէզների նշանակութեան մասին և վերանորոգել իմ «Մանկական պարտէզ» ձեռնարկի այն կորցրած թերթիկները, որոնք ինչ-որ պատճառով չը մտան ժամուլի մէջ։

Վերջերս ինձ դիմեց մի երիտասարդ այրի հայուհի խնդրելով տեղաւորել իրան մի որևէ ընտանիքում բօնայի պաշտօնով։ Լուսցարար կնոջ աղջիկ է նա։ Ամուսնացել է կօշկակարի հետ։ Օգնելով իր ամուսնուն աշխատանքի մէջ, ինքը միևնոյն ժամանակ պատուէրներ էր վերցնում տանը՝ գործելով յարդէ աթոռներ և կողմնաներ սպիտակեղէնների համար։ Անկարգութիւնների ժամանակ այդ կնոջ ամուսինը սնանկացաւ, հիւանդացաւ, մեռաւ։

— Ես լաւ ծանօթ եմ մանկական պարտէզի բոլոր պարապմունքների հետ։ Զէ՞ որ ես ուսել եմ տիկին Բաբայեանի ժողովրդական մանկական պարտէզում, որ գտնվում էր Զրկինեանց եկեղեցու ծխական դպրոցին կից։ Իմ մանկութեան այդ տարիները ամբողջ կեանքիս մէջ ամենաբաղդաւորներն են,—նկատեց խեղճ այրի կինը։

Ժողովրդական մանկական պարտէզը Զրկինեան դպրոցին կից։ Որքան հաճելի յիշողութիւններ պատկերացան միանգամից իմ առջև։ Մի վայրկեան ես վերապրեցայ հեռու անցեալը։ Իմ մանկավարժական գործունէութեան առաջին քայլերը ես սկսեցի Ս. Ե. Բաբայեանի դպրոցում։ Մի՞թէ 25 տարի է անցել այդ օրից։ Կարծես կենդանացան իմ առջև սևահեր մանկիկները, գողնոցները կապած, գետեղված Զրկինեանց եկեղեցու գաւթում պատշգամբ ունեցող երկու սենեակների մէջ։

Այո, բոբրոքվեց կրակը և խկոյն էլ հանգաւ։

Որովհետև այդ օգտաւէտ գործի նախաձեռնողը Ս. Ե. Բաբայեանն էր և հէնց նա էլ վառեց այդ կրակը, ուստի ես թոյլ եմ տալիս ինձ մի քանի խօսք ասել յարգելի տ. Բաբայեանի բեղմնաւոր գործունէութեան մասին և մատնանշել՝ թէ ինչպէս յղացաւ նրա մէջ այդ լուսաւոր միտքը, իդէան։

1881 թ.ին արտասահմանից եկաւ Ֆրեօբելի գաղափարներով ներշնչված տ. Բաբայեանը և նպատակ դրեց Թիֆլիսում բանալ հայկական առաջին մանկական պարտէզը, որ պէտք է նախ և առաջ երեխաներին տար նախնական զարգացումն մայրենի լեզուով և երկրորդ՝ ընտելացնէր մեր ծնողներին խօսել իրանց զաւակների հետ հայերէն։

Դպրոցական գործի և մանկական պարտէզի կազմակերպման մասին կասեմ մի բան միայն, որ ժամանակակից մանկական պարտէզներից շատերը կը ցանկանային ունենալ այն կահաւորութիւնն ու պայմանները, որոնց մէջ գտնվում էր տ. Բաբայեանի պարտէզը 25 տարի առաջ։

Ահա թէ ինչպէս է նկարագրում իր յիշողութիւնների մէջ յարգելի պ. Ազայեանը տ. Բաբայեանի մանկական պարտէզը։

«Ընկայ մանկական պարտէզ, ուր երեխէրքը անմեղ հրեշտակների էին նման, ուրախ, զուարթ, ինչպէս անհոգ թռչնիկները, որոնք անընդհատ թռչկոտում և երգում էին իրանց մայրիկի՝ Սօֆիայի չորս կողմում, և ես չը գիտէի, թէ որից եմ աւելի հիացած—կրթողից թէ՞ կրթվողներից, այնքան ընական սիրալի էր դրանց բարոյական և մտաւոր աճումն ու զարգացումը»։

Բացի առաւօտեան պարապմունքներից՝ Բաբայեան ամուսինները, կամենալով տարածել երեխաների՝ մինչև դպրոց մանելու դաստիարակութեան գաղափարը, սիրալիր կերպով պատրաստակամութիւն յայտնեցին դասախօսութիւններ կարդալ այդ հարցի առիթով հետաքրքրվող մայրերի ու դաստիարակչուհիների համար։ Եւ ահա այդ ունկնդրուհիներից էլ կազմվեց մի խմբակ «Ֆրեօբելեան ընկերութիւն» անունով, որը իրան նպատակ դրեց բանալ ժողովրդական մանկական պարտէզ։

Շատերը յոռետեսութեամբ էին վերաբերվում այդ բանին և գտնում էին, որ դա շռայլութիւն է ժողովրդական զաւակների համար։ «Ինչու՞ նրանք պէտք է զբաղվեն Ֆրեօբելեան խաղալիքներով»—նկատում էին ամեն բան և ամենքին քննադատել սիրող է, որովհետև հասարակութիւնը կը պահպանէ փոքրիկներին ամենավաղ մանկութիւնից, որոնց բաղդը իր միօրինակ օրերը անց է կացնում կեանքի պաղ ու մայլ մթնոլորտում։ Մեղանից որին չէ պատահել

«Հաղորդակցութիւնը Բաշտի և Սպահանի հետ բոլորովին կտրվել է։ Քաղաքի 300,000 ազգաբնակութիւնը պաշարման պատճառով մեծ զրկանքների մէջ է։

«Այցելեցի հիւանդ պառկած էյնուդ-Դովլէին, որ յայտնեց, թէ անզօր է դիմադրել հնդկա-եւրոպական հեռագրագծի փչացնելուն։ Կարգադրութիւններ է արած նորոգել հեռագրաթելը, բայց այդ կարգադրութիւնների վրա ուշադրութիւն չեն դարձնում։ Բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ պաշարումը թերևս շուտով վերցվի։ Շահի ֆինանսական միջոցները սպառվում են»։ (Հ. Գ.)

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Մեկսիկա, 28 փետրվարի

Լուրերին նայած, Նիկարագուայի և Սան-Սալվատորի միջև պատերազմ է ծագվել։ Ասում են, որ սան-սալվատորական «Պրէզիդէնտա» յածանաւը ընդհարվել է Նիկարագուական «Մոմոտոբօ» նաւի հետ։ (Հ. Գ.)

—

Վաշինգտոն, 28 փետրվարի

Պետական դեպարտամենտը անակնկալ կերպով յետ կանչեց Միացեալ Նահանգների Նիկարագուայում գտնվող ներկայացուցչին։ Նիկարագուական երեք նաւեր երեքշաբթի օրը յարձակվել են սան-սալվատորական «Պրեզիդէնտա» նաւի վրա։ Նիկարագուայի նաւախմբի գլխաւոր նաւը առաջին հրաձգութիւնից յետոյ դուրս է գալիս կազմից, սակայն, լուրերին նայած, նրա վնասուածքները շուտով ուղղել են և նա շարունակել է հետևել «Պրեզիդէնտին»։ Տեղի է ունեցել նոր ընդհարում։ (Հ. Գ.)

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 1 մարտի

Փետվարի 28-ին վերջացաւ ֆինանսական տարին։

Նոր բիւջէն պլատին կը ներկայացվի վաղը։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 մարտի

«Կօր. Բիւրօյին» Կ. Պոլսից հեռագրում են. «Աւստրիական Լլոյդի ապրանքներն էլ սկսեցին դատարկել»։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 28 փետրվարի

Պարիզ-Լիոն-Միջերկրական ծով երկաթուղագծի պօստային պաշտօնեաները երէկ երեկոյեան միտինգ կազմելուց յետոյ պօստատան առաջ ցոյց արին, որի ժամանակ մի քանի հոգի վիրաւորվեցին։ Թեթև վիրաւորվածների թւումն է ոստիկանապետ Լէպինը։ Պօստային պաշտօնեաները ստատսեկրէտարի օգնական Սիմիանից պահանջում են հրաժարական տալ։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 1 մարտի

Մօտ հազար երկաթուղային պօստային բաժանմունքներ փետրվարի 28-ի երեկոյեան ժողով գումարեցին։ Պօստ-հեռագրական ծառայողների ընդհանուր միութիւնը հաղորդեց երկաթուղային պօստին, որ նա իր յոյսը կարող է դնել միութեան վրա։ Ժողովը մի բանաձև ընդունեց, որով յայտարարվում է, որ սկսված գործողութիւնները կը շարունակվեն, մինչև որ լիակատար բաւարարութիւն կը ստացվի։ Բողոք է յայտնվում նաև կատարված ձերբակալութիւնների առիթով։ Որոշվեց մօտակայ օրերում կազմել երկու ժողով։

Պարիզ-Բօրդօ պօստային գնացքը մեկնելու բօպէին պօստային ութ ծառայողներ աշխատանքները դադարեցրին։ Նրանք ժամանակաւորապէս հեռացված են պաշտօնից և հաւանօրէն կենթարկվեն պատժի։

Գլխաւոր հեռագրատանը համեմատաբար հանդիստ է։ Հեռագրական ծառայողների մեծ մասը աշխատանքները վերսկսեց։ Կարծում են, որ կայողվի անմիջապէս նորմալ ծառայութիւնը վերականգնել։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 27 փետրվարի

Պատգամաւորների պալատ։ Զեխարմատականներն առաջարկում են հերթական ընդունել այն հարցապնդումը, որ ուղղված է կառավարութեանը Զեխիայի ազգային սոցիալական կուսակցութեան անդամների դէմ դատական քննութիւն սկսելու առիթով։

Ներքին գործերի մինիստրը դրականապէս յայտնում է, որ կառավարութիւնը բնաւ չէ օգտվել պրովոկատորգործակալների ծառայութիւններից։ Քննութիւնը հիմված է աշկարա փաստերի վրա։ կառավարութիւնը անհրաժեշտաբար հոգալու է ներքին հանգստութեան մասին, քանի որ երկրին վտանգ է սպառնում։ Կառավարութիւնը ընդամին յոյս ունի, որ չեխ ժողովուրդը ցոյց կը տայ իր հայրենասիրութիւնը և լոյալութիւնը։

Զեխ-արմատականները, ընդհատելով մինիստրի ճառը աղմկալից բողոքներով, վերջացնելուց յետոյ վրա են ընկնում սպառնական ժեստերով մինիստրների օթեակի վրա, բայց նրանց ջանքերը ապարդիւն են անցնում խմբված զերմանացի և քրիստոնեայ սոցիալիստ պատգամաւորների շնորհիւ։ Հերթականութիւնը չէ ընդունվում։ (Հ. Գ.)

—

Լիսաբոն, 1 մարտի

Տրանսմատլանտիկ նահանգի Մուրզա քաղաքում խուժանը յարձակվեց հարկաքաշի ատեանի վրա, գրաւեց արժէքաւոր իրերը և, առաջարկելով պաշտօնեաներին հեռանալ շինութիւնից, այրեց նրան։ Ոստիկանութիւնը կարգը վերահաստատեց։ (Հ. Գ.)

—

Բերլին, 28 փետրվարի

Սամօանի նահանգապետի խնդիրքի համաձայն, նկատի առնելով տեղացիների յուզմունքը, զէպի Սամօա կղզիները մեկնեցին երեք պատերազմական նաւեր։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

Սուրէնեան տեղապահի «անխորհուրդ խորհրդականները» կարողացան, վերջապէս, ցոյց տալ հայ հասարակութեան, որ իրանք ոչնչով պակաս չեն հանգուցեալ Խրիմեան կաթողիկոսի օրով գործող վեհարանական կամարիլայից և գիտեն նրանից աւելի լայն և մեծ ինտրիգներ սարքել Գէորգեան ճեմարանի դէմ։

«Մշակը» առաջինն եղաւ, որ մերկացրեց այդ «անխորհուրդ խորհրդականների» ոտնձգութիւնները և լարած դաւերը ճեմարանի դէմ, դաւեր, որոնց հիմքը պէտք է որոնել անձնական գծուծ հաշիւների մէջ։ Այդ ինտրիգները այսօր այնքան ակներև են և զզւելի, — զզւելի մանաւանդ այն պատճառով, որ այս անգամ ինտրիգները լարում են ոչ թէ Էջմիածնի միաբանութեան «հին, փտած, պառաւած» անդամներ, այլ մագիստրոս, գիտնական և պերճախօս քարոզիչ տիտղոսներ կրող վարդապետներ, —որ նոյնիսկ այն թերթերը, որոնք մի քիչ առաջ ամեն կերպ գուրգուրանք էին ցոյց տալիս այդ վարդապետներին և որոնց մէջ այդ վարդապետները մարդում են իրանց գրիչները, ստիպված տեսան իրանց նոյնպէս մերկացնել անարժան ինտրիգները։

Մենք չը գիտենք, թէ սինօդը in corpore որքան մասնակցութիւն ունի ճեմարանի դէմ լարված ինտրիգների մէջ, որոնց վերջնականապատակը, ինչպէս երևում է, տեսուչ Բերբերեանին հեռացնելն է, որովհետև ճեմարանին վերաբերեալ գործերի իրաւասութիւնը պատկանում է աւելի տեղապահին, քան սինօդին, բայց մենք իրաւունք ունենք յանդիմանութիւն կարդալու Էջմիածնի ամբողջ միաբանութեան, որ իրան այնպէս է պահում, որպէս թէ ինքն ապրելիս լինի լուսնի վրա և ոչ թէ Էջմիածնում, որպէս թէ Էջմիածնում անցածդարձածը իրան չէ վերաբերում։ Մթթէ Էջմիածնի միաբանութիւնը այնքան սաստկացած է, այնքան զուրկ է ինքնուրոյնութիւնից, արժանապատուութիւնից, որ չէ կարողանում բարձրացնել իր ձայնը, բողոքել և թոյլ չը տալ, որ մի քանի parvenus-ներ առաջ քշեն իրանց կամայականութիւնները, օգտվելով տեղապահի թոյլատուութիւնից և ապիկարութիւնից։

Եւ ոչ միայն հայ մամուլը, այլ և ռուսական մամուլը իր ձայնը բարձրացրել է և հրաւիրում է հասարակութեան լուրջ ուշադրութիւնը Էջմիածնում կատարվող ազգեր երևոյթների վրա։

Ժամանակ է, որ հայ հասարակութիւնն ևս իր ձայնը, բողոքի, զայրոյթի հզօր ձայնը բարձրացնէ վանքական ինտրիգների դէմ և թոյլ չը տայ, որ ազգային-եկեղեցական մի կարևոր հաստատութիւն, որ սկսեց խաղաղ և կանոնաւոր կերպով ընթանալ նոր տեսչութեան օրով, նորից յուզմունքների, անկանոնութիւնների և խռովութիւնների ասպարէզ դառնայ։

Իսկ «Հովիւ» կղերական թերթին խորհուրդ կը տանք կոկորդիլոսի արցունք չը թափել, քանի որ ճեմարանի դէմ ինտրիգների առաջին քարը նետողն իր գլխաւոր սիներից մինը՝ ասպանդական Բենիկ վարդապետն եղաւ, որ այժմ, ինչպէս լսում ենք, զբաղված է Բաքուում «Հովիւի» համար պրօզելիտներ որսալով։ Շահրիար

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆՈՒ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Փետրվարի 28-ին, շաբաթ օր, երեկոյեան հանգուցեալ Զիւանու բնակարանում տեղի ունեցաւ ամբիծքը, որին ներկայ էին համակրողների և յարգողների երկսեռ հասարակութեան ստուար բազմութիւն՝ խմբագրութիւնների ներկայացուցիչներ, գրականագէտներ, ուսուցիչներ, հաշտարարների ներկայացուցիչները, աշուղներ, սազանդարներ։ Կոյս Հռիփսիմէ Թալիբեան երկու ուրիշ կոյսերի հետ միասին կարդաց երեկոյեան հանդիստը, մինչև որ հաւաքվեց քահանայական դասը և կատարվեց ամբիծքը։

Հանգուցեալի ընտանիքը ստացել է մի շարք ցաւակցական հեռագիրներ գաւառներից, Էջմիածնից՝ Յուսիկ և Կոմիտաս վարդապետներից ու քահանաներ Յ. Յովհաննիսեանից, Բագուից՝ մի խումբ երիտասարդներից, Բաթումից՝ Մ. ա.-ք. Մելիքանից և Գ. Գրիգորեանից (այնտեղ ևս կատարել են հոգեհանգիստ), Ալէքսանդրօպոլից՝ ս. Փըրկչի դպրոցի ուսուցչական խմբից, Բալախանուց՝ Հռիփսիմեան դպր. ուսուցչ. խմբից, Բագուից Յ. Կոստանեանից, Կարսից՝ Մ. ք. Տէր-Պետրոսեանից, Ալէքսանդրօպոլից՝ աշուղ Գ. Տալեանից և այլ մասնաւոր անձերից։ Ցաւակցական նամակներ ստացվել են Ս. Մանդինեանից, Կ. Հ. Բարեգործ. Ընկ. Դուշէթի ճիւղի նախագահից, Ա. ա.-ք. Բագրատունուց, Բաթումից՝ Շահ-Արմէնից, Ալէքսանդրօպոլից՝ Գ. Բնբուրեանից, Երևանից՝ Մ. Ենգիբարեանից և Էջմիածնից՝ Բարգէն վարդապետից։

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ մարտի 1-ին, կիրակի օր։

Դեռ ևս առաւօտեան ժամը 10-ից հանգուցեալի բնակարանում ու շուրջը անգին բազմութիւն խռնված սպասում էր հանդիսի սկզբնաւորութեան։

Ժամը 10 և էկսին սկսվեց արարողութիւնը։ Բնակարանից դուրս բերին հանգուցեալի մարմինը, և սգի թափորը առաջ շարժվեց Արաս-Արգակայա հրապարակով դէպի Վէլեամինովսկայա փողոց ու այնտեղից էլ Վանքի մայր տաճարը։ Յարգողների ստուար բազմութիւնը, բաղկացած գլխաւորապէս հայ հասարակութեան հասարակ դասից, արհեստաւորներից, զրաւեռնեկային ծառայողներից, ինտելիգենտ հայ երիտասարդութիւնից տեղական հաստատ բոլոր ուսուցիչներից, բոլոր գրականագէտներից, իր պարտքն էր համարել ժամակցելով այդ թաղման հանդիսին իր յարգանքը մատուցանել հայ ազգի այդ մեծ աշուղին։ Դագաղը մինչև Վանքի մայր եկեղեցին ձեռքերի վրա էին տանում։

Վանքի ներսում ու դուրսում ևս մեծ ժողովուրդ էր հաւաքվել։

Տեղի ունեցաւ պատարագի արարողութիւնը, որից յետոյ Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը, ընարան ընտրելով հանգուցեալի «Զախորդ օրերը ձմրան նման կուգան ու կերթան» տողը, մի դղեղցիկ դամբանական դրուատեց մեծանուն հայ աշուղի ժատուցած խոշոր ծառայութիւնը հայ հասարակութեան և ապա, շեշտելով որ մենք ոգևորվում ենք, խօսում, ճառում մեր գործիչների դագաղների վրա միայն և այնուհետև շուտով մոռանում, յորդոր կարդաց, որ զէպի Զիւանին ունեցած յարգանքը մշտատև լինի և հայ հասարակութիւնը միջոց տայ նրա հողակոյտի վրա մի շիրիմ կառուցանելու համար, որպէսզի օտար անցորդները նոյնիսկ գերեզմանատուն այցելելիս՝ տեսնեն, որ մենք կարողանում ենք գնահատել ու գիտենք յարգել մեր ազնիւ գործիչներին։

Դամբանականից յետոյ յուղարկաւորութեան թափօրը, գլուխ ունենալով սրբազան առաջնորդին, շարժվեց դէպի Երևանեան հրապարակ և այնտեղից՝ Արմենական փողոցով ու Հալաբարով Խոջիվանքի գերեզմանատունը։ Դագաղը, այս անգամ բաց, դարձեալ ձեռքերի վրա տարան մինչև Երևանեան հրապարակը, ուր սրբազանը հոգեհանգիստ կատարելով վերադարձաւ առաջնորդարան, իսկ թափօրը շարունակեց իր ճանապարհը։ Մինչ այդ լրագրական մի լուրի թիւրիմացութեամբ՝ թէ յուղարկաւորութեան հանդէսը պէտք է անցնէր Զօրանցօվի կամուրջով, մի մեծ բազմութիւն էլ այնտեղ էր հաւաքված սպասում, մինչդեռ թափօրը անցաւ Ալիւրի ժէյդանով, Զիւանու անուան սրճարանի մօտից։ Հալաբարում թափօրին ուղեկցող ժողովրդի թիւը աւելի ևս բազմացաւ ու այդպէս հասաւ մինչև Խոջիվանքի գերեզմանատունը։

Աշուղի գերեզմանը փորված էր վերևի մասում, հայ գրական գործիչների շրջանում՝ Րաֆֆու, Մերենցի, Մուրացանի, Ալ. Երիցեանի մօտերքում։

Հանգուցեալի դագաղի վրա դրված էին մի քանի պսակներ՝ անուանի աշուղի հայրենակիցներից, Թիֆլիսի աշուղներից և սազանդարներից, «Պրօգրէս» տպարանի բանուորներից և այլն։

Յուղարկաւորութեանը ներկայ էին «Մշակի», «Գործի», «Նոր Դպրոցի», «Գիւղատնտեսի», «Աղբիւր-Տարազի», «Հասկերի», «Ազգագրական Հանդէսի», «Հովիւի» և «Լուսայի» խմբագիրները, «Տնայնագործական», «Ազգագրական», «Մեղու» և «Լոյս» ընկերութիւնների, Յովհաննեան դպրոցի ներկայացուցիչները, Ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը, տեղական մեր յայտնի բոլոր հայ գրականագէտները, դերասանները, նկարիչները, ուսուցիչներն ու ժուրնալիստները և այլն։

Ժամը մօտ 2-ին յուղարկաւորութեան հանդէսը հասաւ Խոջիվանք՝ ուղեկցութեամբ խուռն բազմութեան։ Բայց գերեզմանի առաջ սկսվեցին ճառերը, թւով եօթը։ Ճառախօսներից մէկը՝ ազգով վրացի՝ շատ համակրելի իմաստով ոտանաւոր արտասանեց։ Հայ ճառախօսները, — բացի Զիւանու որդուց,—ժողովրդի հասարակ խաւերից էին։ մի քանիսը հազիւ էին տիրապետում գրական լեզուին։ խանութպան, մանր գործակատար, տիրացու. և նրանց ճառերը իսկապէս մեծ նշանակութիւն և ազդեցութիւն կունենային, եթէ խօսողները անպաճոյճ կերպով յայտնէին իրանց և իւրայինների կսկիծը, ցաւը յայտնի աշուղի կորստի առիթով։ Դժբաղդաբար ճառախօսները թեթև կերպով բռնված էին «ինտելիգենտականութեամբ» և չը թողին ցանկալի տպաւորութիւն։

Գ. Լևոնեանի դիմումը իր հօր աճիւնին, ի միջի այլոց, հետևեալ, կարծես մեղայական, խօսքերն էր պարունակում. «Մի ուրիշ վիշտ, որ աւելի խորն է տանջում ինձ այժմ, այդ այն է, որ ես կարծես ինձ մեղաւոր եմ զգում քո առաջ, մեղաւոր՝ որ չը կարողացայ քո կեանքը բարելաւել, քեզ ապահովել անտեսապէս, և, զուցէ, երկարէին քո օրերը։ Դու քո երգ ու նուագով յոգնած, ծերացած սպասում էիր՝ թէ երբ կը գտնայ հիսիսից քո ուսանող աւագ որդին, որ քեզ չդնող ընկեր հանդիսանայ բազմանդամ ընտանիքիդ կառավարութեան լուծը քաշելու, որ քեզ նեցուկ լինի հանգիստ, ապահով կեանք վարելու։ Բայց, աւաղ, վերադարձաւ որդիդ։ Նա գալիս էր քո ճանապարհով, նա էլ ընդունել էր կեանքի փշոտ ուղին, զրկանութիւնն ու գեղարուեստը։ Եւ այդ ուղին շատ թանգ նստեց մեր վրա, մենք շատ նեղութիւն քաշեցինք միասին, մինչև որ դու ընկար ուժասպառ։

«Ուսուցիչ դարձայ և խմբագիր. հայոց ազգի մէջ քաղցածութեան այդ տիպիկ դիրքերին հլու գերկատար. դրա համար, իմ գրութիւնն էլ, հայր, շուտով դարձաւ նոյնը, ինչ որ քոնն էր։ Մակայն ես մեղաւոր չէի, դու էիր ինձ այդպէս դաստիարակել, երբ աչքերս նոր բացարի տեսայ քո տանը գրքեր, լրագիրներ, պատկերներ ու երաժշտական գործիքներ. մանկութիւնիցս մեր տան խօսակցութեան նիւթն էր գիրքը, գրականութիւնը, երգն ու երաժշտութիւնը. մեզ մօտ մշտապէս եկող ու մուտ անողներն էին աշուղներ, ուսուցիչներ և գրական մարդիկ. էլ ինչպէս կարող էր քո տանից փողի մարդ դուրս գալ, ինչպէս կարող էր «խալխի նօքարի» որդին աղա դառնալու ձգտումներ ունենալ։ Նա միևոյն ժամանակ շեշտեց, որ հօր յայտնաղամ ֆիզիքականը մաշողը և գերեզման գլորողը միայն տնտեսական անձուկ վիճակը չէր, այլ իր ընտանիքին պատահած մի շարք ձախորդ հանգամանքները, ինչպէս մի զաւակի մահը, երկու որդիների բերդարգելութիւնը, մշտական խուզարկութիւնները, ոստիկանական հալածանքը, որով ջուրթակը ամիսներով գրաւում էին և արգելում նրա երգն ու նուագը։

Այդ դիմումից յայտնի հաւ ևս, որ Զիւանին առաջարկել էր իր որդուն լրագրութեան միջոցով յայտնել հայ հասարակութեան իր վիճակը փոխադարձ մխիթարութեան և աջակցութեան ակնկալութեամբ, բայց որդին ինքնասիրութիւնից դրդված հրապարակական դիմումն չէ արել, մինչև որ իր ցաւակից բարեկամներից մէկը ինքն է դիմումն արել, և այն։ Իր վերջին խօսքերում որդին խոստանում է կանգուն պահել հօր օջախը և վառ՝ նրա թանգագին յիշատակը։

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Փետր. 17-ին վախճանվել է Պետերբուրգում հրէայ բարձր Հորացիյ Հինցբուրգը 76 տարեկան հասակում։ Թէ ինչ դեր է խաղացել նա իր թշուառ ազգի համար, երևում է նրանից, որ ամբողջ հրէութիւնը նրա կրուսանը անկեղծօրէն ողբում է։ Նրա հիւանդութեան ժամանակ հրէաները՝ թէ Ռուսաստանի զանազան կողմերից և թէ արտասահմանից բազմաթիւ հեռագիրներով հարցնում էին իրանց նշանաւոր բարերարի առողջութիւնը։ Ինչով էր այդ՝ թէ մտքով և ուսմամբ և թէ հարստութեամբ փարթամ հրէան այդպիսի համակրութիւն և հռչակ ստացել իր ցեղակիցների մէջ։ Այդ հարցին պատասխանում է հրէայ գրող Իլլի Զիսսէնը «Рѣчь» լրագրի 47-դ համարում։ Հանգուցեալը, ըստ յօդուածագրի, մի քանի տասնեակ տարիներ առանց յոգնածութիւնը տարել է իր վրա ծանր հոգացողութիւնը իր իրաւազուրկ ցեղակիցների դրութիւնն բարեփոխութեան համար, մի տեսակ լռիկայն ներկայացուցիչ հանդիսանալով իր ցեղին։ Նա մասնակցել է բոլոր հրէական բարեգործական, գիտական, ուսումնական և գաղթային հիմնարկութիւններին թէ առատ նուիրաբերութիւններով և թէ անձամբ իր խորհուրդներով։ Նա մասնակցել է և ընդհանուր մարդասիրական ընկերութիւնների։

Մերձակայ մասնակցութիւն է ունեցել հանգուցեալը յետագայ հրէական հիմնարկութիւնների մէջ. 1879-ից նախագահի պաշտօն էր վարում հրէից՝ լուսաւորութիւն տարածող ընկերութեան, իսկ 1893-ից հրէից գաղթային ընկերութեան կոմիտէի։ Միով բանիւ ամեն տեսակ հրէական ընկերութիւնների սիւնն է եղել։ Հանգուցեալը յարգանք է ունեցել և ռուսաց լաւագոյն շրջանակներում։

Բայց, ըստ յօդուածագրի, հանգուցեալի գործունէութեան մարդասիրական կողմը չէ նրա ամենամեծ ծառայութիւնը իր դժբաղդ ցեղին։ Նրա անունը պատկանում է հրէից պատմութեանը Ռուսաստանում, իբրև մի մարդու, որը երկար տարիներ հրէաների ազգային շահերի պաշտպան է եղել, ամեն կերպ աշխատելով տերութեան մօտ՝ շնորհիւ իր մեծ հռչակի իր ազգի մէջ՝ թեթևացնել վերջինի իրաւազուրկ դրութիւնը։ Նա եղել է մի տեսակ միջնորդ հաւատարմատար տէրութեան առաջ խնդրող «իր ցեղի դրութեան թեթևութեան մասին»։ Ապագայում պատմութիւնը կը պարզէ, թէ ինչ մեծ ծառայութիւն է ցոյց տուել այդ արժանի զաւակը իր դժբաղդ ազգին 40 երկար տարիներ դիմելով բարձր իշխանութեան և ազդեցիկ անձնաւորութիւններին՝ զրաւոր և բերանացի դիմումներով։ «Տէրութիւնը սովորաբար համարում էր բարոն Հինցբուրգին ամբողջ հրէութեան ներկայացուցիչ և կարևոր դէպքերում դիմում էր նրան. 70 թւականներին նա մասնակցել էր՝ ինչպէս էկսպերտ՝ «Հրէաների դրութեան բարեփոխութեան Յանձնաժողովին»—«Комитетъ по устройству быта Евреевъ»—որի յիշատակն է յայտնի զեկուցագիրը յօդուտ հրէաների իրաւունքների հաւասարութեան, որը կազմել էր հանգուցեալ Նեկլիւդովը, որը շատ ջերմ էր վերաբերվում դէպի բարոնը»։ Առհասարակ ամեն անգամ, երբ բարձրանում է որևիցէ հարց կառավարական բարձր շրջաններում, հրաւիրում էին հանգուցեալին իբրև՝ «ամբողջ ազգի ներկայացուցիչ։ 1887-ից հանգուցեալը մասնակցել էր «Բարձրագոյն Յանձնաժողովին հրէաների վերաբերեալ օրէնքների» քննադատութեան առիթով կոմս Պալէնի նախագահութեամբ, և այդ յանձնաժողովի լօգունքը հրէաների իրաւանց հաւասարութիւնն է եղել։ Վերջին տարիները հանգուցեալը ծանր հիւանդութեան պատճառով (ազիքների հիւանդութեան) չէր կարող ժամանակել իր ազգին վերաբերեալ գործերին անձամբ, բայց իր միջոցները չէր խնայում ամեն կրթական, բարեգործական, կրօնական և զուտ ազգային գործերին։ Հանգուցեալի մարմինը տանում են Պարիզ տոհմական հանգստարանում ամփոփելու։

Արդեօք դժուար հետ կարելի է համեմատել այդ մեծ հրէային։ Ամմահ կոմս Յովհաննէս Լազարեանին, որը իր ժամանակին՝ ռուսաց տէրութեան առաջ հայոց ազգի ներկայացուցիչ էր համարվում. նա ևս չէր խնայում թէ իր միջոցները և անձնական մասնակցութիւնները ամեն տեսակ գործերի յօդուտ իր դժբաղդ ազգին, ինչպէս գրում է հանգուցեալ Եղիանը իր նշանաւոր աշխատութեան մէջ (Снош. Петра Великаго съ Армянами)։ Մենք ունեցել ենք շատ նշանաւոր անձնաւորութիւններ և հարուստներ և բարձր աստիճանաւորներ, բայց նրանցից ոչ ոք չէ ունեցել այն հռչակը և չէ թողել այն անմահ անունը, ինչպէս Յովհաննէս Լազարեանը հայոց ազգի մէջ։ Նա չէ դաւաճանել իր ցեղին ոչ մի գործում. գործել է իբրև հաւատարիմ իր ազգին, եկեղեցուն մի նշանաւոր հայ և դրանով ստանալով մեծ ժողովրդականութիւն իր ազգի մէջ՝ հռչակվել էր թէ տէրութեան առաջ և թէ օտար ազգերի մէջ, հանդիսանալով ներկայացուցիչ համայն ազգի։ Այդ ամեն տոհմի մասին մենք ունենք հանգուցեալ Մսերի գրաբար լեզուով կենսական մի գրուածքը, որը չէ տարածված մեր մէջ և անմատչելի է։ Ցանկալի է ունենալ աւելի ընդարձակ կենսագրութիւն թէ հայերէն նոր գրականական լեզուով և թէ ռուսերէն այդ մեծ տոհմի մասին, և դրա համար թող մը-տածեն մեկ ժառանգ իշխ. Արամելիք-Լազարեանը և վերջապէս Պետերբուրգի եկեղեցական պատկառելի խորհուրդը՝ մըրցանակ նշանակելով վերոյիշեալ կենսագրութեան համար։ Մնծայոյս ենք, որ իշխ. Ս. Արամելիք-Լազարեանը իր ամմահ նախնեաց կենսագրութեան-ի հարկէ, պատկերազարդ—բոլոր ծախսերը իր վրա կը վերցնէ։ Այո, հանգուցեալ Հինցբուրգը նոյնն էր հրէաների համար, ինչպէս Յովհաննէս Լազարեանը մեզ համար։

Բժ. Բ. Աղասարեան

Պետերբուրգ

ՈՐԲԱԽՆԱՄԸ

Թիֆլիսի Բէհբուտեան փողոցի արևմտեան ծայրում, աջ թևի վրա, երիսը դէպի հարաւ, դէպի Բուսաբանական այգու բարձունքը, № 39 տան մէջ, ներքնայարկում, գտնվում է Որբախնամը։ Զորս թէ հինգ աչքից բաղկացած մի բնակարան է դա, ուր ընդունված են, հայ կանանց խնամքի տակ, 20-ի չափ որբիկներ՝ 8—9 տարեկանից սկսած դէպի վեր. մանուկներ երկու սեռից։

Անցորդ ու այցելու կարդում են բնակարանի մուտքի վրա հետևեալ ծանուցագրութիւնը երկու լեզուով, հայերէն և ռուսերէն՝ «Որբանոց Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան Անդրկովկասում»։

Ներս մտած՝ գտայ այնտեղ, մի արձակ սենեակում, ուր խաղում էր ձմերային արը, մանրիկների մի խումբ սերտարանական նստարանների վրա։ Զուարթ դէմքերով վեր կացան նրանք ողջոյնի։ Դա աչքիս պատկերացաւ, արևի այդ շողքի մէջ, թռչնիկների մի բոյն, որ թեարախ ձայնարձակութեամբ ընդունում է իրան բուսբերողին։ Հասկանալի է. վարչութեան ատենապետուհին օր. Զ. Բայսողլեան և մանկիկների վարժուհին տիկին Տէր-Սարգսեան, դրանք էին ինձ առաջնորդողներն Որբանոց մտնելու։ Բոյնի զուարթութիւնը անշուշտ

բարի գուշակութիւն էր՝ թէ որբերը իրանց ապաստարանում մօրուների ձեռքի տակ տրորվածի պէս չեն։

Գեղեցիկ է, աքանչելապէս գեղեցիկ, տեսնել՝ թէ ինչպէս մի բուռը կանայք, ճար ու ճարակ անելով, հոգ ու խնամք չը պակսեցնելով, մերժումներից չը վհատվելով, ժողովում են ու պահում-պահպանում որբիկների մի խումբ, որպէսզի կրթութեան, նախապատրաստական ուսման ու ձեռարուեստի շնորհիւ մի օր նրանց մի բարի բաղդի տիրացնեն։ Ինչ աւելի գովելի զբաղմունք տրամադրելի ազատ ժամեր ունեցող կանանց համար՝ քան մայրանալ անտիրական որբիկների և սրբել արտասուքը ապաբաղդիկների աչքից ու, ներեցէք բացատրութեանս, ոտի տակ կոխտվելու ու դարշահոտելու վիճակված նիւթը խլել ապականութիւնից ու նրանից բարեկերտ և պիտանի անօթներ ընծայել հասարակութեան։

Ինձ ցոյց տուին ննջարանը, ցոյց տուին հիւանդներին առանձնացնելու սենեակը, ցոյց տուին խոհանոցը, լուացարանը, ուր ըստ յարմարութեան հասակի սան ու սանուհի գործնական վարժութեամբ սովորում են տնարարութեան, տնտեսութեան արուեստը։

Ի հարկէ տեսածներս տիպարներ չէին կատարելութեան, մինչև իսկ բաւական հեռու էին սրանից, սակայն կայ գաղափարն ու ձգտումը՝ ըստ ամենայնի դովելի։ պակասում է միջոցը. սրա զօրանալով՝ կը զօրանայ նաև Որբանոցը դէպի ցանկալի տիպը։ Բարենախանձ հասարակութեան օգնութիւնից է կախված այդ բանը։

Վարչութիւնը ներկայումս ունի իր ապաստարանում 20 հատ որբիկ։ Նա իւրաքանչիւր մէկի վրա տարեկան ծախսում է 164 ռուբլի, այն է՝ կեցութիւն, սնունդ, հագուստ, ուսում, և ամենայն պէտք միահամուռ՝ մարդ-գլուխ 164 ռուբլի, որ ամսական կը դայ ամեն մէկին իբր 14 ռուբլի։

Երեխաները միասին են խնամվում Որբանոցում մինչև իրանց 12 տարեկան հասակը. այնուհետև աղջիկները՝ մեալով հանդերձ ընկերութեան խնամքի տակ՝ տեղաւորվում են ընտանիքներում որպէս թոշակաւորներ, շարունակելու համար ուսումն ու ձեռարուեստի վարժութիւնը պատշաճաւոր հաստատութիւնների մէջ մինչև իրանց 17 տարեկան հասակը. աղջիկները կը շարունակեն մեալ Որբանոցում միևնոյն նպատակներով՝ դարձեալ մինչև 17 տարեկան հասակը։

Համառօտ նկարագրութեամբ այդ է Բէհբուտեան փողոցի Որբանոցը, որին նուիրված են, իրանց համար գեղեցիկ, նուիրական և ընկերօգուտ զբաղմունք ճանաչելով այդ, մի խումբ հայ կանայք, որոնց խրախուսելը՝ իրանց ձեռնարկած գործը բարգաւաճեցնելու համար՝ ամեն մի բարենպատակ և պարտաճանաչ հայի պարտք պէտք է նկատվի։

Ընկերութեան անդամակցութեան վճարն է 3 ր., որ և՝ խիստ համեստ միջոց ունեցողի համար էլ անդգալի կացուցանելու մտքով՝ արտօնված է վճարել մաս-մաս։

Անդամակցութիւնը կանանց է միայն վերապահված, — անշուշտ այր մարդոց նուիրատու ձեռքը կծկեցնելու խորհրդով չէ այդ,—ուստի ցանկալի է, որ հայ ազնուասուն տիկնայք և օրիորդներ չը խնայեն իրանց լուսաւոր Որբանոցին և մտնեն գործունէութեան այդպիսի մի ասպարէզ, որ գեղեցկացնելով իրանց հոգին՝ աւելի համակրելի և հրապուրիչ կը ներկայացնէ իրանց արտաքինը։ Զի՞նչ որ գեղեցիկ հոգին արտափայլում է մարդուս դէմքի վրա, որպէս զուարթութիւնը նշոյլակում է աչքերի մէջ և ժպիտը ծաղկում է շրթունքների վրա։

Ա. Մ. Եզեկեան

ԴՊՐՈՑ ԶՈՒՆԵՆՔ

—

Կարծես դպրոցը սկսել է հետաքրքրել և շուրջը խմբել մեր հասարակութեան և մտաւորականների առանձին ուշադրութիւնը։ Եւ, իրաւ, այժմ ամենահիանալի հարցը մեր կեանքում դպրոցական հարցն է, և այդ ծանր վէրքը այնքան խորն է, որ նրան բուժելու համար կարևոր և անհրաժեշտ է արմատական և լուրջ ուշադրութիւն և, որ ամենակարևորն է, լուրջ, տոկուն և յամառ աշխատանք։

Դպրոցը ամենամեծ ֆակտորն է կուլտուրական կեանքի առաջխաղացութեան, աւելի մեծ ֆակտոր է ժողովրդի անտեսական բարւոքման. դպրոցը այն բոցն է, որտեղից պիտի անցնի, զտվի մեր ժանգոտած աշխարհահայեցողութիւնը, որտեղից պիտի անցնի բոլոր մեր դարերի մտաւոր մատերիալը և, իբրև մաքուր մետաղ, հայ միտքը՝ հայ գիտութիւնը հալված, զտված պիտի անջատվի երկար ժամանակվանից կուտակված անպէտք, անիմաստ հաւաքուածքից (накипъ)։

Դարեր շարունակ մեր կեանքը կաղապարվել է անիմաստ սխոլաստիկ և բոմանտիկ հասկացողութեան վրա, մենք ապրել ենք հեռու և կտրված բէալական աշխարհից, մինչև-դեռ մենք մեզ օրօրելով գեղեցիկ, քաղցր երազանքներով, օդային ամրոցներով, իսկ ներքևը, հողի վրա մնացել է մեր նոյն խրճիթը, նոյն հողի որջը։

Մեր մտաւոր զանձը, ժողովրդի դարևոր հոգեկան ամբարը, առանց ֆիլտրի, զրաման գնացել քարացել է, մնացել է, մընացնելով մեր տեսութիւնը և մեր հասկացողութիւնը և այսօրվայ կեանքի և այսօրվայ պահանջների մասին։

Մեր կեանքը չունի իր յղկուածքը (грань), իր բանդը, այլ ինչպէս փափուկ սպունգ ծծել, կուլ է տուել և մաքուր ջուրը, նրա հետ և փրփուրը—վիժուածքը, կազմելով իր մէջ այնպիսի մի թարախակալած ուռոյցք, որը բուժելու համար հարկաւոր է լուրջ անդամահատութիւն և երկար տարիների յամառ և տոկուն հոգատարութիւն, խնամք։

Ապրել ենք ուղեցել, բայց ապրելու եղանակը, բուսունը փնտռել ենք անցած գնացած կեանքի տուած փորձի, դասի հիման վրա։

Անշուշտ, կեանքը տուել է իր շաբլօնը, և այդ շաբլօնով ապրել ենք, բայց թարմացնել, առողջացնել այդ կեանքը զիտութեան և կուլտուրայի տուած անթիւ ստեղծագործութեան արդիւնքներով՝ մենք չենք արել, չենք ցանկացել, և դրա համար է, որ դպրոցը, որը կեանքի հայելին է, կեանքի ստեղծագործութիւնը, գնացել է նոյն ճանապարհով, նոյն ուղղութեամբ և դարձել է մի անպէտք զէնք, մի անիմաստ ֆակտոր կուլտուրական կեանքի յեղաշրջման գործում։

Մենք կարծել ենք, որ մի այբբենարան, մի գրիչ կարող են մեր կեանքը յեղաշրջել և մեր կեանքում մտցնել առողջ կուլտուրա, բայց զարհուրելի կերպով սխալվել ենք։

Մի մանուշակ մարդ տուն է կառուցանում և ձգտում է հարստացնել նրան, իսկ դպրոցը, որը պիտի առողջ հասարակութեան գունն է, մինչև կարօտ չէ հարգատացման։

Կուլտուրական մարդու տունը ունի անհրաժեշտ պահանջներ՝ սեղան, հայելի, ամանեղեն, աւելացրէք գրա վրա և շատ անգամ անհրաժեշտութիւնից դուրս կուլտուրայի ստեղծած իրեր մեր յարմարութեան և առողջութեան համար, օր. լուացարան, բարձր առաստաղ, մեծ լուսամուտներ, վենտիլիատորներ, գաշնամուր, գրքեր և լրագիրներ, թատրոն և ճանապարհորդութիւն, շատ և շատ ուրիշ գեղեցիկ և առողջ պահանջներ, կեանքի ուրախութեան և նամանաւանդ առողջութեան տեմպը բարձրացնող պահանջներ և կուլտուրայի ստեղծած յարմարութիւններ, իսկ դպրոցը նայեցէք որքան յետ է մնացել։

Յետ է մնացել, որովհետև մենք՝ ամբողջ ազգովին առած՝ յետ ենք մնացել, չը կան այդ կուլտուրական կեանքի պահանջները, չը կայ և դպրոցում նրա անդրադարձումը։

Բայց կայ մի ուրիշ մեծ պահանջ. գաղտնի և ապրելու պահանջն է, և փառք Աստուծոյ, որ այսօր մենք զգում ենք, որ աղքատ ենք, քաղցած ենք, և հարստանալու և մնվելու միակ աղբիւրը սկսել ենք փնտռել դպրոցի մէջ։

Եւ պիտի շինենք այդ դպրոցը, որը մենք չունենք։

Նախորդ յօդուածովս ես անցողակի խօսեցի մի քանի դպրոցական անհրաժեշտ պէտքերի, ցաւերի մասին. նոյնը կրկնում եմ նորից, որ դպրոցը պէտք է հարստանայ. նրա հարստութիւնից կախված է և մեր ապագայ հարստութիւնը։

Դպրոցը իր չորս պատերով, շատ անգամ խարխուլ պատերով, և իր ուսուցչով դպրոց չէ. դա մի տուն է, ուր գրագէտը անգրագէտին այբուբէն է սովորեցնում, իսկ այբբենարանը միակ՝ մի ողորմելի ֆակտոր է կուլտուրական կեանքը հաղորդիչ դարձնելու դարերով քարացած կեանքի համար։

Եթէ մենք շինում ենք դպրոցը, պէտք է շինենք նրան այնպէս, ինչպէս հարուստը, կուլտուրական մարդը կը շինի իր տունը. թող քիչ լինեն դպրոցները, բայց լինեն ամենաընդարձակ ժոքով դպրոցներ։

Մտէք մեր ամենահարուստ դպրոցից մինչև վերջին գիւղական հայ «մեդրէսէն» և կը զարհուրէք նրա անօրինակ աղքատութիւնից և անկուլտուրականութիւնից։

Դուք միայն կը գտնէք անթիւ դասագրքեր և «թիւնների» շարաններ, որոնցով համակված է դպրոցը և որոնց տարափով լցված է մանուկ սերնդի գլուխը, իսկ գիտութեան արդիւնքը, կուլտուրայի ստեղծագործութեան նմուշները՝ մի փնտռէք, ի զուր է—չէք գտնի, գտնէ երբ չը կան—լինեն նրանց սուրբգատները չը կայ արշին, չը կայ գուեան—լինի նրա սուրբգաւառ—նկարը, որ աշակերտը տեսնէ, զգայ, որ կայ մի չափ—արշին, որով չափում են, որ կայ մի գործիք—գուեան, որով վարում են գետինը։

Մթթէ զարհուրելի չէ, որ ուսուցիչը գլօբուսի տեղ ստիպված է խնձոր կամ գնդակ ցոյց տալ աշակերտներին, և որ осина ծառի բացատրութիւնը ստիպված է տալ, ասելով որ դա բոյս է և ոչ չորքոտանի կենդանի։

Մթթէ զարհուրելի չէ, որ ուսուցիչը նոյնիսկ շատ անգամ չը գիտէ երկրագործական գործիքների և կամ տեղական բոյսերի անունները և նոյնիսկ բարդին չէ կարող ջոկել մայրի ծառից։

Եւ զարմանալի չէ, բոլորովին զարմանալի չէ։

Խոստովանում եմ՝ ինքս տասչորս տարվայ ուսուցիչ եմ, և ես էլ չը գիտեմ այդ տեսակ «չնչին», «փոքրիկ» բաներ և ստիպված եմ, չարաչար ստիպված եմ նոր ի նորոյ սովորելու։

Եւ դա առաջ է եկել ինչից. նոյն դպրոցից, որտեղ սովորել եմ և լօգիկա, և հոգեբանութիւն, և նոյնիսկ աւելի բարձր «թիւններ», որոնք յետոյ կեանքի մէջ—հողի վրա այնպիսի արգութեամբ են գոլորշիացել, ինչպէս էֆիրը տաքացրած սենեակում։

Եւ այսօր ես և ինձ հետ շատերը ափսոսում ենք մեր թանգագին ժամերը, որ «թիւնների» ճակատամարտում սպառել ենք և մեր եռանդը, և մեր միտքը, և չը գիտենք այսօր, որ հացը թխում է հացթուխը, և կօշիկը կարում է կօշկակարը։

Sapienti sat...

Յակովբ Գենջեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կովկասի Փոխարքայ Իլ. Իվ. Կոմս Վօրոնցով-Դաշկովը իր ամուսին Ելիզավետա Անդրէեվնայի հետ Բագու և Գանձակ ճանապարհորդելուց յետոյ շաբաթ, փետրվարի 28-ին, վերադարձաւ Թիֆլիս։

✦ Թիֆլիսի կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովը Զիւանու թաղման համար նուիրից յիսուն ռուբլի, որով նախկին յիսուն ռուբլու հետ ամբողջ նպաստը հաւասարվում է հարիւր ռուբլու։

✦ Երէկ, Մոսկվայից, պրոֆ. Խալաթեանից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Որպէս վշտացած եմ շնորհալի աշուղ-Զիւանու, ժողովրդական խոհերի ոգեորված երգչի և քաղաքացու մահվան առիթով»։

✦ «Մշակի» նախորդ համարում խօսելով պ. Գ. Սունդուկեանի նոր պիէսի անուան մասին, յայտնել էինք, որ, հաւանօրէն, նա կը կոչվի «Թագա խարար»։ Այժմ հաստատ կարող ենք ասել, որ նա վերջնականապէս կոչված է «Սէր և կապանք»։

✦ Մեզ հաղորդում են, որ այս օրերս դէպի Գանձակի գաւառը կուղեորվի մի յատուկ անձ ցոյց տալու սերդատ և կաթնատնտեսական ուրիշ գործիքներ Հայլիքենդի շրջանի, օրինակ Միխայլովկա, Գետաշէն և շրջակայ տեղերի գիւղացիներին։ Ցանկալի է, որ գիւղացիները օգտվէին դէպքից և աշխատէին այնքան ծանօթանալ նոր գործիքների հետ, որ կարող լինէին մայիսից ձեռնարկել գործի ինքնուրոյն կերպով։

✦ Ստացանք «Աղբիւր» պատկերազարդ ամսագրի փետրվարի համարը, որին կցված է «Աղբիւրի ակունքը» 1883—1908 թ. թ. առաջին պրակը։ Սա պարունակում է իր մէջ սկզբնական տարիների աշխատակիցների պատկերները—Ղ. Ալայեանցի, Նէմէյօվի, Նատալիա Տէր-Մարկոսեանի, Դարբինէյ Միրզոյեանի, Բաֆֆու, իշխ. Ս. Արղութեանի, Կ. Մելիք-Շահնազարեանի, Ն. Տէր-Աւետիքեանի, Վ. Փափազեանի, Յ. Յովհաննիսեանի, Լ. Մելիք-Ադամեանի, Ա. Մեհրաբեանի և աշուղ Զիւանու — կենսագրութիւններով հանդերձ։ Ինչպէս երևում է, աշուղ Զիւանու «Բարի գեղեցիկ» երգը առաջին անգամ տպվել է «Աղբիւրի» մէջ, 1883 թիւն։ Առհասարակ համարը կազմված է խնամքով, տպագրութիւնը մաքուր է և գեղեցիկ։

✦ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար պ. Ա. Խատիսեանը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Թոյլ տուէք ձեր լրագրի էջերում խորին շնորհակալութիւն յայտնել բոլոր այն անձանց և հաստատութիւններին, որոնք օգնութեան ձեռք կարկառեցին Սիցիլիայի և Կալաբրիայի երկրաշարժից ֆնասված ազգաբնակութեանը, ուղարկելով այդ նպատակով իրանց նուիրատուութիւնները քաղաքային վարչութեան, այսինքն այն տիկիններին, որոնք իմ խնդիրքով յանձն առան ժողովարարութիւն անել, այն է՝ իշխ. Ն. Բեհբութեան, Մ. Վեղրինսկայա, Է. Գայդամակինա, Ե. Գօլուխանեան, Տ. Կոլիւբակինա, Ե. Կորգանովա, Ե. Միրզոյեվա, Մ. Միրիմանեան, Կ. Մարկուզովա, Ե. Պետրոպալովսկայա, Մ. Պոտոս, Մ. Բոխլին, Ա. Բամենդիկ, իշխ. Խերխէուլիձէ, Մ. Ծուրինեան և Ե. Շահրուդաղեան. նաև Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհրդին և միւսներին, որոնց նուիրած գումարի քանակը 532 ր. 92 կոպէկ է։ Այս գումարը քաղաքային գումայի յատկացրած 500 ռուբլու հետ ուղարկվեց կոմսուհի Ե. Ա. Վօրոնցովա-Դաշկովային Թիֆլիսի Նահանգապետի միջոցով։ Նուիրատուների ցուցակը կը տպվի տեղական լրագիրներում»։

✦ Թիֆլիսի քաղաքագլուխը, ի նկատի առնելով որ եղանակը տաքանում է և ազգաբնակութեանը, նամանաւանդ մանուկներին, հարկաւոր է զով անկիւն, շաբաթ, փետրվարի 28-ին, դիմեց «Փառքի տաճարի» կառավարիչ գեներալ Պոտոյին խընդրելով կարգադրել բանալ Ալէքսանդրեան այգու վերևի մասը, որպէսզի ազգաբնակութիւնը օգտվի։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց միջնորդութիւն յարուցել իշխանութեան առաջ, որպէսզի վառօդային պահեստները տեղափոխվեն քաղաքից 750 սաժ. դուրս, որովհետև այն վայրը, ուր այժմ գտնվում են յիշեալ պահեստները, շրջապատված է ազգաբնակութեամբ և պահեստները համարեա ազգաբնակութեան կենտրոնում են գտնվում։

✦ Թիֆլիսի քաղաքային սանիտարական-բժշկական խորհրդի վերջին նիստում որոշվեց մօտակայ հինգշաբթի նշանակել սանիտարական-բժշկական խորհրդի և քաղաքամասերի սանիտարական տեսուչների խառն ժողով՝ մշակելու միջոցներ, որպէսզի Թիֆլիսում խօլերան մուտք չը գործի (պատուաստելու կայարան բանալ, սանիտարական հետազօտութիւններ և այն կատարելու համար)։ ընտրված է յատուկ մասնաժողով, որի կազմի մէջ մտնում են սանիտարական տեսուչ բժ. Ստեփանեանը և քաղաքային բժիշկ Գեղալինը և քաղաքային անասնաբոյժերը՝ քաղաքային սպանդանոցից միսը շուկայ բերելու ձևը մշակելու համար։

✦ Երէկ զինուորական շքեղ պատիներով թաղեցին սպանված զինուոր Միխայիլ Զինդօյին։ Սգահանդէսին մասնակցում էին մի քանի զօրավարներ, երաժշտախմբ. դագաղը տանում էին օֆիցէրները. առջևից տանում էին 15 պսակ։

✦ 2-րդ փոխադարձ վարկի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում վերատեսչի ընտրութիւնը չը կայացաւ ձայների օրինական թուի բացակայութեան պատճառով։

✦ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջերս Թիֆլիսում կողոպուտները և սպանութիւնները յաճախ են կրկնվում, ադմինիստրացիան առաջարկեց վաճառականներին՝ վարձել 30 հոգի՝ քաղաքապահների ներկայ կազմը ուժեղացնելու նպատակով։ Շաբաթ, փետրվարի 28-ին, վաճառականները դիմեցին քաղաքային վարչութեանը, յայտնելով որ իրանք համաձայն են վարձել 10 քաղաքապահների այն պայմանով, որ մնացած 20 քաղաքապահները վարձվեն տնատէրերի հաշիւին։

✦ Կովկասեան Կայսեր. Բժշ. Ընկերութեան կազմակերպած սիստեմատիկ դասախօսութիւնները, որ ընկերութեան տանը կարդացվում են կիրակի երեկոները, հետզհետէ հետաքրքրական են դառնում և լսողների աւելի ու աւելի մեծ թիւ գրաւում։ Կիրակի, ամսիս մէկին, մեծերի համար կարդացվեց երկու դասախօսութիւն. բժ. Բոժոմսկի կարդաց ռուսերէն՝ մարսողութեան մասին, իսկ բժ. Դամբաշիձէն վրացերէն՝ մարդակազմութեան մասին։ Վերջինս այդ երեկոյ խօսում էր յատկապէս սրբեցողութեան մասին, որին, պէտք է ուրախութեամբ արձանագրել, եկել էր լսողների աչքի ընկնող մեծ բազմութիւն, առաւելապէս բանւոր և նման դասակարգից։ Դասախօսութիւնների ժամանակ ցոյց են տրվում նաև պատկերներ, որը և աւելի հետաքրքրական է դարձնում նիւթը։ Երկու դասախօսութիւնների ժամանակ ևս դահլիճը ծայրից ծայր լիքն էր լսողներով։ Առաջիկայ կիրակի էլ լինելու է նոյն դասախօսութիւնների շարունակութիւնը։ Մուտքը ձրի է։ Ցաւօք սրտի պէտք է նկատել, որ հակառակ յայտարարութեան, երեխաներ շատ կային դահլիճում և ուստերէն դասախօսութիւնը համարեա խանգարվեց նրանց անտեղի աղմուկներից։ Ցանկալի է, որ ընկերութիւնը ուշք դարձնի այդ հանգամանքի վրա։

✦ Ստացանք հետեւեալ նոր գրքերը—1) Ինքնաղարգացումն, գրեց Սեդրակ Թառայեանց, № 1, Տնային գիտական գրադարան, պատկերազարդ, Ժընեվ, 1909 թ., գինն է 20 կ.։ 2) Դէրժ, աշխատասիրեց և հրատարակեց Վարդան Քամալեան, առաջին և երկրորդ հատոր, Վառնա, 1908 թ., գինն է 5 ղրուշ (50 կոպէկ)։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Փետրվարի 28-ին, գիշերվայ ժամը 11-ին, Գօրիցկայա փողոցում, բօրչալուցեցի Եակով Գօչիի գինետունը դիւղ. Բաժդէն Կօպալաշվիլին, Պաւէլ Բիբիլէյշվիլին, Ալէքսանդր Պերցխալաւան, Անտօն Վաշակիձէ և Իլլարիօն Վաշակիձէն քէֆ էին անում։ Բէֆի ժամանակ Կօպալաշվիլու և Բիբիլէյշվիլու միջև վէճ ծագեց, որ փոխվեց ծեծի, որի ժամանակ վերջինը խոհանոցի դանակով ծանր վէրք հացրեց առաջինին։ Ցանցաւորին ձերբակալել են։

✦ Փետրվարի 28-ին Նաւթիւղում, «Նաւթիսճալա» տեղում ձկնորները հանել են մի 20 տարեկան ռուսի դիակ։

✦ Մարտի 1-ին «Ելիսավետպոլ» հիւրանոցում Աղա-Հաջի-Ասկեար-օղլու սենեակից գողացել են 230 ռուբլու իրեր։

✦ Փետրվարի 28-ին Սօլդատսկի Բազարում խուզարկութեան ժամանակ ձերբակալվեցին 16 մարդ առանց զբաղմունքի և անցագրի, իսկ Պեսկովսկայա և Զօրնեսենսկայա փողոցներում՝ 15 մարդ։

✦ Մարտի 2-ին կախաղան բարձրացրին Դաղաշ-օղլուն։

ՄԱՄՈՒԼ

Ալէքսանդրօպոլում տեղի ունեցած բանկի կողոպտման առիթով «Ախուրեան» թերթը գրում է.

Հասարակութեան համբերութիւնը ըսպառեց, դառնութեան լեղին բաժակը զեղվեց ամսիս 19-ին։ Ալէքսանդրօպոլի ազգաբնակութիւնը այլևս չը կարողանալով տանել այն սոսկալի մղձաւանջը, որը՝ նստած նրա կոկորդին՝ խեղդում էր, ցնցվեց և ոտքի կանգնեց այնպիսի թափով, որ իր արդար զայրոյթը արտայայտեց և նոյն օրը ընկաւ ոստիկանութեան առաջ, գնաց նրան աչակցելու՝ գտնել և կալանաւորել այն չարագործներին, որոնք կողոպտել էին քաղաքիս Փոխադարձ Վարկի Ընկ. գրասենեակը։

Առաւօտ վաղ աւելի քան հազար մարդ շրջապատել էին Ընկերութեան գրասենեակը և միաձայն պահանջում էին դիմել ամենախիստ միջոցների, անշուշտ կալանաւորել և դատարանին յանձնել այն չարագործներին, որոնք այդպիսի յանդգնութեամբ կողոպտել էին գրասենեակը, այն հիմարութիւնը, որը գտնվում է քաղաքիս կենտրոնում, ոստիկանութեան և դաւառական վարչութեան հիմարութիւնների մէջ, որից քիչ վեր գտնվում է պետական գանձարանը և հաշտարար դատարանը, դէմը քաղաքային ակմբանոցը, որտեղ գրեթէ մինչև լոյս երթևեկում են հետի և կառքերով յաճախորդները։

Վէրքը հասցրել էին քաղաքի և քաղաքացիների սրտին, կսկիծն այնքան սոսկալի էր, որ ժողովուրդն ինքը կը տեսնէր չարագործների դատաստանը սոսկալի վրէժխնդրութեամբ, եթէ գաւառապետը և խոհեմ առաջաւորներն իրանց յորդորներով և բացատրութիւններով նրան չը կարողանային համոզել, հանդստացնել և զգաստացնել։

Հասարակութեան խիղճն այնպիսի բուռն բողոքով էր բողոք բարձրացրել, որ ամեն մի անհատ ձգտում էր իր ոյժերի համեմատ նպաստել բացատրելու գաղտնիքը՝ և նոյն օրն իսկ, դեռ մութը չը կոխած, ոչ միայն պարզվել էր չարագործների անունները, այլև՝ թէ ինչպէս է յղացել այդ միտքը, կազմակերպվել և գործադրվել։

Այս դէպքը շատ լաւն կերպով ապացուցեց այն առածի միտքը, թէ «գեղը կանգնի՝ գերան կը կոտրէ։ Թէ հասարակութիւնը դատախազ կանգնի, նրա միջից չարագործները շատ շուտ կը ցրվեն և մատաղ սերունդը զրանց սոսկալի վարակիչ ազդեցութիւնից ազատվելով՝ կը կանգնի մարդկութեան արժանավայել դիրքի վրա։

Ալէքսանդրօպոլի հասարակութեան այդ պատուաբեր ընթացքը այնպիսի խոր տպաւորութիւն թողեց մինչև իսկ շրջակայ Կարս, Երևան, Ախալքալաք և այլ քաղաքների վրա, այնպէս սթափեցրեց ժողովրդին, որ կարելի է վստահել, թէ ոչ միայն մեր, այլ և մեր շրջակայ քաղաքներում դժուար թէ կրկնվեն այդպիսի չարագործութիւններ։

Ինչպէս միշտ կրկնվել է, նոյնը դարձեալ մեծ հաճոյքով կրկնում ենք ժողովրդին, որ միայն ոստիկանութիւնը չէ կարող պարզել չարագործութիւնները, յանցաւորներին դատարանի մատնել, եթէ ժողովուրդը նրան անկեղծ և անձուէր կերպով չաջակցի։

Փետրվարի 19-ի և հետեւեալ օրերի աջակցութիւնը ապացուցեց, որ ալէքսանդրօպոլցու խիղճը չէ մեռած, նրա ազնիւ զգացումները չեն խեղդված, նա գիտէ ու կարող է ի հարկին այդ խղճի ձայնը բարձրացնել և արդար պատժի հասցնել չարագործներին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 փետրվարի

Հաշիւ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան օգտին կայացած երեկոյթի, որ տեղի ունեցաւ արքունական թատրոնում 1908 թ. դեկտեմբերի 21-ին.

Մուտք.—Մուտքի տոմսերից 1972 ր. 30 կ., վիճակախաղից 593 ր., բուֆէտից 120 ր. 40 կ.։ Ընդամենը 2685 ր. 70 կ.։

Ծախք.—Թատրօնին 1000 ր., աֆիշներ 37 ր. 20 կ., ցրիչին 25 ր., յայտարարութեանց 52 ր. 45 կ., ծաղիկներ և մանր ծախք 16 ր. 37 կ.։ Ընդամենը 1131 ր. 2 կ.։ Զուտ արդիւնք մնում է 1554 ր. 68 կ.։

Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք նպաստեցին երեկոյթի աջողութեանը իրանց մասնակցութեամբ կամ նուիրատուութիւններով, նոյնպէս նրանց, որոնք պատուեցին երեկոյթը իրանց ներկայութեամբ։

Վարչութիւնը աւելորդ չէ համարում յայտնել ևս, որ, բացի վերոյիշեալ զուտ արդիւնքից, բաւական չաշափելի գումար, այն է մօտ 400 ր., մնում է ապառիկ այն տոմսերի համար, որոնց վճարը դեռևս չէ ստացվել։ Վարչութիւնը խոնարհաբար խնդրում է չը վճարողներին՝ շտապել որքան կարելի է շուտ հասցնել այդ գումարը Ընկերութեան կար ու ձևի արհեստանոցը։ Այդ աննշան լումաներից են կազմվում այն գումարները, որոնցով պէտք է պահպանեն իրանց գոյութիւնը Ընկերութեան հիմնարկութիւնները։

Վարչութիւն

—

Զրակոյս-Մամադաձոր, 15 փետր.

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու Զրակոյսցի՝ Ասխարադում բնակվող Ալահվերդի-բէգ Իշխանեանին, մամադաձորցի մի խումբ երիտասարդներին և Զրակոյսցի Մեսրոպը-բէգ Իշխանեանին, որոնցից առաջինը մեր նորաբաց երկսեռ միդասեան ուսումնարանի օգտին իր սեփական միջոցներից ուղարկել է 20 ռուբլի. իսկ գրաւոր պարտականութիւն է յայտնել տարեկան 20 ռուբլի յատկացնել ուսումնարանին, և այդ գումարը կը ստացվի միշտ յաւնվարին. դպրոցի շինութեան համար, իր գրաւոր խոստման համաձայն, առանձին գումար է յատկացնելու։ Երկրորդը Բագուից ուղարկել է դպրոցի օգտին 26 ռուբլի։ Երրորդը նուիրել է ուսումնարանին մի աշխարհագունդ քարտէզ (полушарія), գոյների ժողովածու և մի զանգ։ Պարոնը խոստացել է ոյժերը ներածին չափ դպրոցին օգնել։

Վերոյիշեալ նուէրները խորին շնորհակալութեամբ ընդունեցինք և խնդրում ենք մեր օտարութեան մէջ բնակվող երիտասարդներին՝ նոյն օրինակին հետեւելու։

Լսում ենք, որ Բագուում բնակվող մի խումբ Զրակոյսցիներ հանգանակութիւն են սկսել ուսումնարանի օգտին։ Անչափ շնորհակալութիւն։

Զրակոյս-Մամադաձոր գիւղերի՝

Հասարակութիւն

—

Թիֆլիս, 2 մարտի

Զուղուրէթի ս. Աստուածածին եկեղեցու ծխական դպրոցի հոգաբարձութիւնը այսու յայտնում է իր շնորհակալութիւնը տ. Իվանիցկային, որ նա յունվարի 11-ին գիշեց իր պրոժէկտորը երեք ժամով, որով հնարաւորութիւն տուեց դպրոցում սովորող չքաւոր մանուկներին շարունակել ուսումը։

Ի դիմաց Զուղուրէթի ս. Աստուածածին եկեղեցու ծխական դպրոցի հոգաբարձութեան՝

Հոգաբարձու-քարտուղար՝

Յար. Գասպարեանց

ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

—

Երուանդ վարդապետը իր բարձր դիտութիւնը համաշխարհային դարձնելու համար մի կատաղի արշաւանք է սկսել լուսաւորչական եկեղեցու ներկայ ատուածպաշտութեան դէմ, մի հաւածանքներ ծէսերի, ժամերգութեան և արարողութիւնների վերաբերութեամբ։ Փորձում է մի նոր փրկիչ հանդիսանալ, մի նոր յիզափոխութիւն առաջ բերել դարերով սրբագործված, որդոյ որդի սիրված եկեղեցական պաշտամունքների մէջ։ Այդ նորելուկների նախագահը, այդ Արսէնների և Եղնիկների շառաւիղը, այդ նոր Արիոսը զզուել է «տաղտկալի շարականներից, երկարատև ձանձրալի ժամերգութիւնից և աւելորդ զանգահարութիւնից»։ Ամեն օր կրկնվող «խոնարհեցոն և ապրեցոն» ծակում են հայր սուրբի ականջները, ուստի առաջարկված է կրճատել, խուզել և ամեն բան վերջացնել և «ներկայ ժամանակի պահանջման համապատասխան դարձնել»։ Այդ վարդապետի դիտութիւնը աւելորդ է համարում՝ մկրտութիւն, պատարագ, քահանայութիւն, ամենօրեայ երկարատև ժամերգութիւն, զանգահարութիւն։ Կարճ ասենք՝ բան ու զազէն ձեռին իսպառ քարուքանդ է ուզում անել նրկայ եկեղեցին, ոչնչացնել եկեղեցական ամեն տեսակ զարդ ու զարդարանք, համարելով այդ բոլորը կռապաշտութիւն. «պէտք է վերադառնալ նախկին առաքելական եկեղեցուն»,—պնդում է վարդապետը։ Իր փաստաբանութիւնը ապացուցանելու համար աւելացնում է. «Զանձրալի և երկարատև ժամերգութեան պատճառով ժողովուրդը սառել է եկեղեցուց, և մշտապէս եկեղեցին դատարկ է լինում»։

Վարդապետի մանաւանդ այս վերջին փաստաբանութիւնը ճշմարտութիւնից շատ հեռու է։ Ժողովուրդը սառել է եկեղեցուց ոչ թէ երկարատև ժամերգութեան պատճառով, այլ անհաւատ, անկրօն, պորտաբոյծ, աշխարհասէր հոգևորականների վարք ու բարքի պատճառով։ Հոգևորականները իրանց սրբազան կոչմանը չեն համապատասխանում։ Շատ հոգևորականներ իրանց ապականեալ վարք ու բարքի պատճառով, իրանց ծայրայեղ անբարոյականութեամբ, իրանց խայտառակ գործերով սառեցրել են ժողովրդին եկեղեցուց։ Հոգևորականներ կան, որոնք անբարոյականների հետ լուսացնում են, անվայել կեր ու խումով քէֆեր են սարքում իրանց սանամէրների հետ և այդ խայտառակ գործողութիւններից յետոյ զգեստաւորված պատարագ են անում։ Հոգևորականը պռոնիկ կնոջը քահանայական վերարկու է հագցնում, գլխին կամիլավկա դնում և ճաշից յետոյ ժամը 8-ին բուլվար տանում զբօսնելու, կարծելով թէ ոչ ոք չի հասկանայ, բայց իսկոյն նկատվում է, խայտառակվում, տուն փախչում։ Մի քանի օրից յետոյ զգեստաւորված դարձեալ պատարագ է անում։ Հարուստ և ականաւոր եկեղեցականը, իր ազգականուհուն փողով որդայթի մէջ գցելու համար, համարձակ կերպով խնդրանքներ է սարքում իր տանը կանանց համար և այդպիսով բաւականութիւն տալիս իր կրքերին։ Գիւղական այրի քահանաները, առանց նշանակութիւն տալու ժողովրդի բամբասանքին, ազատ կերպով պահում են հացթուխներ և տնտեսներ։ Հազարաւոր օրինակներ կարող ենք առաջ բերել, որ հոգևորականներն են սառեցրել ժողովրդին եկեղեցուց։ Դուրս վռնտեցէք ասպարէզից այդ փչացածներին, մաքրեցէք եկեղեցական սրբավայրը այդ անհաւատ անառակներից, տուէք մեզ մաքուր հոգևորականներ, զարգացած քահանաներ, իրանց կոչումը, իր պատիւը ճանաչող վարդապետներ, այն ժամանակ ժողովուրդը սրտով կը մօտենայ եկեղեցուն և երկիւղածութեամբ կաղօթէ իր ստեղծողին։ Դուրս վռնտեցէք եկեղեցուց այն մեռել ուտող՝ քաւթառ տիրացուներին, մաքրեցէք եկեղեցին այն խրոպոտ հազուաւաճառ տիրացուներից, որոնք իրանց երգեցողութեամբ զզուեցնում են ժամաւորներին։

Թող Երուանդ վարդապետը ապահով լինի, թող հաղարաւոր այդպիսի բրօշիւրներ էլ հրատարակի, այնուամենայնիւ չէ կարող լուսաւորչական եկեղեցու զանգակների առնուշ զօրանջիւնը կտրել։ Այդ զանգակները դեռ շատ Երուանդներ պիտի թաղեն և իրանք այդ բարբրութիւնից պիտի հրաւիրեն իսկական հաւատացեալներին եկեղեցի։

Ասացէք այդ նորասէր վարդապետներին՝ հանգիստ թողնեն մեր եկեղեցին. թող եկեղեցին շարունակի իր հնաւանդ սովորութիւնը, թող երկարատև լինի ժամերգութիւնը, թող ասեն օր կրկնեն «խոնարհեցոն ապրեցոն», ով ցանկանում է թող մտնի եկեղեցի, ինչքան կամենում է՝ թող այնքան կանգնի։ Աստուածպաշտութիւնը շատ ու քիչ կանգնելու մէջ չէ, այլ հաւատքով աղօթելու մէջ է։ Երկարատև ժամերգութիւնը ոչ ոքի վնաս չէ տալիս, ժարգկանց չէ փչացնում, չէ հալածում, չէ կողոպտում։

Ահա շանտաժիստները տակն ու վրա են անում ժողովրդի խաղաղ կեանքը, աւազակները օրը կէս օրին կողոպտում են անմեղներին, անզօրներին։ Անբարոյականները, չարագործները, ոճրագործները վիտում են ամեն տեղ, գողանում են կենդանի մարդկանց, փախցնում են զպրոցական աշակերտներին, ոչխարի պէս մորթում են միմեանց։ Հարբեցողները, թղթամոլները, անգործ թափառաշրջիկները քանդում են շէն օջախներ։ Երիտասարդները փախչում են օրինաւոր ամուսնութիւնից և փչանում են անբարոյական շրջաններում... Եւ այլ հազարաւոր այսպիսի հարցեր կան, որոնց դէմ պէտք է կռուել Երուանդ վարդապետը՝ եթէ զրիչ ունի՝ թող հրապարակ գայ և գրի այս հարցերի մասին։ Այդ վարդապետը կարծում է, թէ «խոնարհեցոն և ապրեցոն» որ վերջացվի, ժամերգութիւնը կրճատվի, շանտաժիստները կը վերջանան։ Երուանդ վարդապետը թող համոզված լինի, որ իր վարդապետութիւնը միշտ կը մնայ ձայն բարբառոյ յանապատի։ Դէռ ևս մի ստուար բազմութիւն սիրում է իր եկեղեցին, իր կրօնը։ Երուանդ վարդապետը իր համախոհներով դեռ մի կաթիլ ջուր է ահագին ովկիանոսի մէջ։

Սարիբէգ Տէր-Մելքիսեդէկեան

Կարս, 26 փետրվարի

Ծանօթ խմբ.—Խոստացած լինելով տեղատալ թեր և դէմ կարծիքներին, Երուանդ վարդապետի յարուցած հարցի մասին, մենք տպագրում ենք ներկայ յօդուածը, չը նայելով որ համաձայն չենք նրա հիմնական պատճառաբանութեան, թէև կարծիքները հոգևորականութեան ապականութեան մասին ճիշդ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

—

Անցեալ ամսի 19-ին (հ. ա.) Վաշինգտոնի հանրածանօթ Սպիտակ Տունը—նախագահական պալատը—ստացաւ նոր կեցող առաջիկայ քառամեակի համար յանձին նորընտիր նախագահ Վիլիամ Տաֆտի։

Նախագահը տակաւին երիտասարդ մարդ է՝ մօտ 52 տարեկան։ Նա ծնվել է 1857 թուին մի արիստոկրատ ընտանիքում. նրա հայրը եղել է դատաւոր, զինուորական, արդարադատութեան մինիստր և դեսպան Ռուսաստանում։ Երիտասարդ Տաֆտը տակաւին 24 տարեկան հասակում արդէն ուներ աչքի ընկնող նշանակովի պաշտօն։ Նոյնպէս շատ երիտասարդ ժամանակ, 30 տարեկան, նա ստացաւ բարձր նշանակութիւն, Օհայոն նահանգի բարձր դատարանի անդամի պաշտօնը։ Շուտով, 1893 թուին, նա արդէն միութեան շրջանային դատաւոր էր։

Երբ սպանիական-ամերիկական պատերազմից յետոյ Միացեալ-Նահանգները անըստպասելի կերպով տիրեցին Ֆիլիպպեան կղզիներին՝ փոխանակ նրանց անկախ հռչակելու,—Տաֆտը նշանակվեց այնտեղի առաջին նահանգապետ, գրեթէ անսահման իրաւունքներով (1900 թ.)։ Ապա 1904 թուին, Ռուզվելտի օրով—ի դէպ՝ նա և Տաֆտը հասակակից են և միասին են սկսել իրանց ծառայութիւնը, ընկերներ լինելով — Տաֆտը դարձաւ Միացեալ-Նահանգների զինուորական մինիստր։ Անցեալ տարի նա ճանապարհորդեց Ասիայում և Եւրոպայում և եղաւ Պետերբուրգում, որտեղ նա անց է կացրել պատանեկական տարիները իր հօր ծառայութեան ժամանակ։

Նորընտիր նախագահը չունի որոշ քաղաքական-հասարակական ֆիզիօնոմիա. նա չէ վայելում նոյնպէս ժողովրդականութիւն, քանի որ, ինչպէս տեսնում էք, երբէք չէ վարել ընտրովի պաշտօններ։ Ցամենայն դէպս նրան չեն սիրում—և արդարացի—պատութեան դիտակից բանւորները, որոնց շահերին քիչ չէ նա վնասել իր դատավարութեան ժամանակ։ Ֆիլիպպեան նահանգապետութեան միջոցին նա ջերմ պաշտպան էր կաթոլիկ-եղուիտ միաբանութեան շահերին, միաբանութեան, որ միշտ անխնայ շահագործել է երկրի բուն բնակիչներին։ Ահա պատճառը, թէ ինչու Հռոմի պապը շատ հաւանում էր Տաֆտի թեկնածութիւնը նախագահութեան. դա քիչ բան չէ, քանի որ Ամերիկայում կաթոլիկները մեծ դեր են կատարում. ի դէպ ասած՝ ահա ձեզ մի լաւ ապացոյց, որ պետութիւնից բաժան եկեղեցին - իսկ Ամերիկայի Միացեալ-Նահանգներում նա ի սկզբանէ այդպէս է եղել—կրկին կարող է խոշոր քաղաքական գործօն լինել ներկայ տնտեսական-հասարակական կարգերի մէջ։ Բայց միւս կողմից Տաֆտը և Ռուզվելտի թեկնածուն էր. աւելի՝ ասանց հեռացված նախագահի հեղինակաւոր ագիտացիայի՝ Տաֆտին հազիւ թէ աջողվէր նախագահութիւնը։ Պ. Զ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

28 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սուվորինի յօբելեանական ընթրիքին ներկայ էին մօտ 600 մարդ։ Կային նաև Պետական Դումայի ու Խորհրդի անդամներից։ Կենացները սկսեց Խոմեակովը և յօբելեարի յանձնարարութեամբ բաժակ առաջարկվեց Թագաւոր Կայսրի առողջութեան և արևշատութեան համար։ Դանլիճը գղղաց ուռաներից և երիցս կրկնված ազգային օրհներգից։

Աջակողմեանների ֆրակցիայի նախագահը մի նամակով, յանուն Դումայի նախագահ Խոմեակովի, բացատրում է, որ փետրվարի 25-ին Դումայի Մարկով 2-րդի արտասանած ճառը եղել է ամբողջ ֆրակցիայի յանձնարարութեամբ և ընաւ վիրաւորանք չէ պարունակում Թագաւոր Կայսրի հասցէին։ Նախագահի նկատողութիւնը հետևաբար վերաբերում է ոչ թէ սոսկ Մարկով 2-րդին, այլ ամբողջ ֆրակցիային։ Ուստի և աջակողմեանների ֆրակցիան իրան վիրաւորված զգալով յանձին Մարկովի՝ սպասում է, որ Դումայի նախագահը ներողութիւն խնդրէ Մարկովից, և ուրեմն ամբողջ ֆրակցիայից։

Խօլերայով հիւանդացան 6 հոգի. մեռնող չեղաւ։

Թագաւոր Կայսրը, օրէր-պրօկուրորի ամենահպատակ զեկուցման համաձայն, նկատի առնելով սէյմօի որոշումը, ամենաողորմածաբար բարեհաճեց Իսան Զօստորգով քահանային շնորհել Վլադիմիրի 3-րդ կարգի շքանշան նրա օրինակելի եռանդուն հովութեան, լուսաւորչական, վարդապետական և հայրենասիրական գործունէութեան համար։

ԵԱՐՕՍԼԱՒԼ։ Խօլերան վերջացաւ։

ՐՕՍՏՕՎ. Դ./վ.։ Տիֆի դէմ կռուելու համար քաղաքային դուման յատկացրեց 5000 բուբլի և որոշեց բժիշկներից իւրաքանչիւրի անձը ապահովագրել 5000 բուբլով, ընտանիքաւոր ֆելդշէրներին և ուսանողներին—երկու տարվայ ռոճիկներով, ծառայողներին և ամուրի ֆելդշէրներին և ուսանողներին—տարեկան ռոճիկով։

ԻՐԻԻԷՎ։ Երէկ տեղի ունեցաւ բաւական ուժեղ երկրաշարժ, 4000 կիլոմէտր տարածութեան վրա։

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ։ Տուրուխանի երկրի Խատանգ գիւղաքաղաքում ձերբակալվեցին մի քանի աւազակներ սպանութիւններ և կողոպուտներ կատարելու ժամանակ։ Նրանցից հինգը սպանվեցին բռնվելու ժամանակ, վեցերորդը վէրքից մեռաւ, չորսը փախչելու բօպէին գնդակահարվեցին, ութ հոգի կենդանի ընկան պահակների ձեռքը։

ՍՕՖԻԱ։ Դանուբի վրա սառցաշարժը աւելի սպառնական է դառնում։ Սօմօվիտի և Նիկոպոլի միջև Դանուբը դուրս է եկել ափերից։ Շատ գիւղերի վտանգ է սպառնում։

ՊԱՐԻԶ։ Ստէնէլի գործի քննութիւնը վերջացաւ։ Քննիչը յայտնեց, որ Ստէնէլի դէմ քննութիւնը ձեռք է բերել բաւականաչափ փաստեր, որոնք ցոյց են տալիս, որ նա ամուսնու և մօր սպանութիւնների գլխաւոր մեղաւորներից մինն է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեան

Սիֆիլիս, վեներական, մզասեական եւ մորթու ցաւեր

Ընդունելութիւն ամեն օր } 12—2 ժ. ցեր. 5—7 ժ. երեկ

Սօլոլակ, Բէյհրութեան փողոց № 33.

(օ. մ.) 100—54

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է այն անձանց, որոնք կամենում են յանձն առնել զպրոցական նոր շէնքի կառուցման (9-րդ քաղաքամասում, Արսենալի մօտ) թէ աշխատանքների կատարումը և թէ շինարարական նիւթեղէնների մատակարարումը։ Այդ մասին յայտարարութիւն տալ հոգաբարձութեան անդամ պ. Յովսէփ Խունունցի անունով մինչև մարտի 7-ը, ցոյց տալով թէ աշխատանքների և թէ նիւթեղէնների մատակարարման պայմանները։

(հ. շ. ե.) 164. 3—3

Ի՞ՆՉ ԲԱՆ Է «ՊՐԻՄԱ-ՎԱՉԸ»

Ժամացոյցների «Պրիմա-Վաչ» խոշորագոյն գործարանը համաշխարհային հռչակ ունի. լաւ չը ճշտած ժամացոյցներ չէ թողնում և բանելուն երաշխաւոր է 10 տարի։ «Պրիմա-Վաչ» դրոշմը ամենալաւ ապահովութիւնն է նրանց յատկութեան, դիմացկունութեան և ճշտութեան։ Զուր չէ, որ գիտակները գերադասում են «Պրիմա» ժամացոյցները։ Շինված են սև պողպատից, տղամ. բաց և շատ տափակ (արծ. բուբլու պէս), մետ. ֆանտազ. ժամատախտակով, լարումն առանց բանալիի, ունի 15 քար։ Նորաձև է և գեղեցիկ։ Գինը ժամանակաւորապէս 12 ր. փոխ. միայն 3 ր. 75 կ., 2 հատը 7 ր.։ Կանանցը 4 ր. 75 կ.։ Նոյնը 84 յարգի արծ., տղամ. 6 ր. 25 կ., 2-ը 12 ր.։ Գրպ. ժամ., սև պողպ., յաւիտ. օրացոյցով, որ ցոյց է տալիս օրը, ամսաթիւն ու ամիսը, միայն 5 բուբ., 2-ը 9 բուբ. 50 կոպ.։ Սև պողպ. ժամ.. 8 օրվայ լարումով, 5 բուբ. 50 կ., 2-ը 10 ր. 50 կ.։ 1—4 ժամ. ճանապ.—40 կ. (Սիբիր 75 կ.)։ Ժամացոյցները ուղարկվում են ճշտած, կաշուէ գեղեցիկ բնի մէջ և նոր ոսկ. նորաձև շղթայով և բրելոկով, վեր. վճ. և առանց կանխավճ.։ Հասցէն՝ Ед. Пр. Т-во «Элекціонъ», Варшава, 65.

(Ե.) (В. 15297) 177. 1—1

ԴԱՒԻԹ ԵՍԱՅԵԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԸ

(ԹԻՖԼԻՍՈՒՄ)

Սրանով յայտնում է ի գիտութիւն իր պատուելի յաճախորդների, թէ Թիֆլիսի և թէ բոլոր գաւառների, որ իր նախկին ունեցած երկաթեղէնի խանութը, որ գտնվում էր Մանթաշեանի Շարքում (Манташевскіе Ряды), փետրվարի 1-ից 1909 թ.

ՏԵՂԱՓՈԽԵԼ Է

Վօկզալնայա փողոցը (Вокзальная улица) իր սեփական շինութեան մէջ՝ էնֆիլաճեանցի ֆաբրիկայի դիմաց և պէտք է գործէ նոյն և աւելի լայն կերպով։ Յայտարարելով դրա մասին, խնդրում է բոլորից նոր պատուէրներով և հաշիւները մաքրելու համար Դ. Ի Մ Ե Լ իր նոր խանութը։ Տելեֆոն № 437.

(ղ. ե.) 129. 10—6



ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ

ԿՕՇԿԵԴԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.

Ամեն տեսակի մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի խանութներում։

Իսկականը միայն այս դրոշմով

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆ. ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ТРЕУГОЛЬНИКЪ"

ԱՆՈՒՆՈՎ

Թիֆլիսի բաժանմունքը գտնվում է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱԶՈՒԻԶԻՆԻ Ռուսական և արտասահմանեան արգիւնաբերութեան

ԿՐԿՆԱԿՕԶԻԿՆԵՐԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՐԷԶԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կրէմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ.

182. 0—1